ՀԱՍՏԱՏՎԱԾ

Կապան համայնքի ավագանու

24 մարտի 2022 թ.

թիվ 24-Ն որոշմամբ

# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*


**1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք** 1

**2. Համայնքի իրավիճակի նկարագրություն** 3

2. 1 Համայնքի ընդհանուր նկարագրություն 3

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը 14

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը 32

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և կանխատեսումները 33

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 36

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՍՀ/ վերլուծություն 40

**3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում** 41

3.1 Համայնքի զարգացման տեսլական 41

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 42

**4. ՀԶԾ ֆինանսավորում** 46

**5. Ծրագրերի անձնագրեր** 47

**6. ՀԶԾ ֆինանսավորման ամփոփաթերթ** 60

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

**Կապան համայնքի հարգելի բնակիչնե՛ր**

Ձեզ եմ ներկայացնում Կապան համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Այս փաստաթուղթն է հիմք հանդիսանալու առաջիկա բազմաթիվ նախաձեռնությունների, կոնկրետ իրագործելի ծրագրերի, տարեկան համայնքային բյուջեների, տարեկան աշխատանքային պլանների կազմման համար, նաև՝ դառնալու մեր աշխատանքի արդյունքների գնահատման օրինակելի չափման միավորը:

Այդուհանդերձ, հնգամյա զարգացման ծրագրով փորձելու ենք Կապանը դարձնել ավելի ապահով, ավելի հարմարավետ ու ժամանակակից, իսկ համայնք այցելող հյուրերի համար՝ հետաքրքիր և ցանկալի զբոսաշրջային ուղղություն:

Համայնքի կայուն զարգացման առաջնահերթությունները թեև բազմաթիվ են, սակայն, վերջին իրողություններով պայմանավորված՝ համայնքի համար գերակա խնդիր է մնում անվտանգության ապահովումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը: Պետք է ձևավորել արագ արձագանքման խմբեր, հիմնել նոր ապաստարաններ, նորոգել բազմաբնակարան շենքերի նկուղները և կառուցել թաքստոցներ բոլոր սահմանամերձ գյուղերում:

Միաժամանակ, հարմարավետ և ժամանակակից համայնքի տեսլականը ենթադրում է ճանապարհների, մայթերի բարեկարգում, բազմաֆունկցիոնալ խաղահրապարակների կառուցում, խմելու և ոռոգման ջրերի հին համակարգերի հիմնանորոգում, տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանում, գյուղատնտեսության զարգացում, մշտական աջակցում փոքր և միջին բիզնեսին, շրջակա միջավայրի պահպանություն, կանաչ տարածքների շարունակական ավելացում և այլն:

Հաջորդ կարևորագույն խնդիրներից է հանդիսանում բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների և տանիքների նորոգումը: Փորձելու ենք ապահովել վերելակային տնտեսության ամբողջական արդիականացումը, տանիքների նորացումն ու պահպանումը: Արդեն իսկ զգալի աշխատանք է իրականացվել՝ համայնքի փողոցային լուսավորության, աղբահանության և ընդհանրապես մաքրության խնդիրները լուծելու համար: Այս համատեքստում, անհրաժեշտ է հնարավորինս համալրել կոմունալ ծառայության ավտոպարկը բազմաֆունկիոնալ մեքենաներով՝ ապահովելով աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների հասանելիությունը բոլոր բնակավայրերում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը, ժամանակակից ու նորացված գույքով ապահովելը, երեխաների կրթության որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելը ևս

համայնքապետարանի առաջնային խնդիրների շարքում է գտնվում: Ուշադրության կենտրոնում կլինի նաև համայնքի մշակութային, մարզական կյանքը, որը բարոյապես և ֆիզիկապես առողջ հասարակություն ունենալու գրավականն է:

Առաջիկա հնգամյակում նախատեսում ենք իրականություն դարձնել ոչ միայն վերը թվարկված ծրագրերն ու միջոցառումները, այլև հիմք դնել այնպիսի իրողությունների, որոնց արդյունքները միգուցե տեսանելի լինեն տարիների ընթացքում, բայց և սկիզբ կդնեն կոնկրետ փոփոխությունների՝ մարդկանց կայուն եկամտի ապահովման առումով, անկախ տարածքում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքից: Հաշվի առնելով Կապանի բնակլիմայական պայմանները, պատմական, մշակութային, բնության հուշարձանների հարուստ առկայությունը՝ այդ փոփոխություններից պետք է դառնա նաև տարածքում զբոսաշրջության զարգացումը, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը և համայնքային-զբոսաշրջային միջոցառումների կազմակերպումը: Կապանը կարող է նաև դառնալ Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների և մարդկանց ինտելեկտուալ ներուժի կիրառմամբ աշխատատեղեր ապահովող կենտրոններից մեկը, ինչի համար նախադրյալներն արդեն իսկ ստեղծված են:

Ծրագրի մշակման գործընթացին մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումները, հասարակության տարբեր ներկայացուցիչներ՝ ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ավագանու, համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ և այլն, քննարկվել և հաշվի են առնվել բոլոր իրատեսական առաջարկությունները:

Կապանցու շահերից բխող այս բոլոր ծրագրերն իրականացնելու ենք միասին՝ համատեղ ջանքերով, փոխադարձ վստահությամբ՝ ի նպաստ կապանցու և հանուն Կապանի:

**Համայնքի ղեկավար՝ Գևորգ Փարսյան**

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ[1]

*2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն*

Սյունիքի մարզկենտրոն Կապանը խորհրդային ժամանակաշրջանում՝ 1938թ., ստացել է շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ, 1963 թվականին՝ հանրապետական ենթակայության, եղել է Ղափանի շրջանի շրջկենտրոնը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3)-րդ մասի համաձայն 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններով Կապան համայնքը խոշորացվել է և այժմ ներառում է 39 բնակավայր (խոշորացման պահին եղել է 38 բնակավայր, Ըրկենանց բնակավայրը Չափնի բնակավայրից առանձնացել է 2021 թվականին):

Համայնքի կազմի մեջ մտնում են 38 գյուղական բնակավայր (Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Սյունիք,Դիցմայրի, Բարգուշատ, Խորձոր, Սզնակ, Եղեգ, Եղվարդ, Խդրանց, Ծավ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Ըրկենանց, Սրաշեն, Սևաքար, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար) և Կապան քաղաքը:

1) Կապան քաղաքը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը կազմում է 4863,89 հա: Քաղաքում առկա է 253 բազմաբնակարան բնակելի շենք, 1977 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 37412 մարդ, որից 18280՝ արական, 19132՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը ՝ 542 /կին՝ 439/:

2) Ագարակ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Ագարակ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը կազմում է՝ 1850.65 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 950 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21,5 կմ, մայրաքաղաքից՝ 311 կմ: Բնակելի տների թիվը՝ 64, որից՝ 62 առանձնատուն, 2 բազմաբնակարան շենք /4 բնակարան/: Բնակչության թիվը՝ 169 մարդ, որից 86՝ արական, 83՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 12 /կին՝ 6/:

3) Աղվանի բնակավայրը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 965.92 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37կմ, մայրաքաղաքից՝ 265 կմ: Բնակելի տների թիվը՝ 56 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 65 մարդ, որից 36՝ արական, 29՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 1:

4) Աճանան գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 799.84 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 880 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12կմ, մայրաքաղաքից՝ 290կմ: Բնակելի տների թիվը՝ 71 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 233 մարդ, որից 119՝ արական, 114՝ իգական սեռի:

5) Անտառաշատ բնակավայրի տարածքը կազմում է 2266.48 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1300 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26կմ,

[1] Համայնքի իրավիճակի նկարագրությունը կազմվել է պատկան մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա

մայրաքաղաքից՝ 291կմ: Բնակելի տների թիվը՝ 68 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 120 մարդ, որից 64՝ արական, 56՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 4 /կին՝ 2/:

6) Առաջաձոր բնակավայրի տարածքը՝ 1286.93 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20կմ, մայրաքաղաքից՝ 287կմ: Բնակելի տների թիվը՝ 120 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 151 մարդ, որից 74՝ արական, 77՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 8 /կին՝ 3/:

7) Արծվանիկ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 2819.17 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1140 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից 14կմ, մայրաքաղաքից՝ 303կմ: Բնակելի տների թիվը՝ 211 հատ, որից՝ 210 առանձնատուն, 1 բազմաբնակարան շենք /4 բնակարան/: Բնակչության թիվը՝ 708 մարդ, որից 369՝ արական, 339՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 17 /կին՝ 11/:

8) Գեղանուշ գյուղի մեջ ներառված են Գեղանուշ և Գոմարան բնակավայրերը: Գեղանուշ և Գոմարան գյուղերը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայրեր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Գեղանուշ և Գոմարան գյուղերը ներառված է, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը կազմում է 7690.22 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1040 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6կմ, մայրաքաղաքից՝ 303կմ: Գեղանուշ բնակավայրի բնակելի տների թիվը՝ 97 առանձնատուն: Բնակավայրի բնակչության թիվը՝ 308 մարդ, որից 149՝ արական, 159՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 8 /կին՝ 7/:

9) Գոմարան բնակավայրի բնակելի տների թիվը՝ 43 առանձնատուն: Բնակավայրի բնակչության թիվը՝ 54 մարդ, որից 28՝ արական, 26՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 1 /կին՝ 1/:

10) Դավիթ Բեկ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Դավիթ Բեկ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 2001.73 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26կմ, մայրաքաղաքից՝ 313կմ: Բնակելի տների թիվը՝ 240, որից՝ 239 առանձնատուն, 1 բազմաբնակարան շենք /քոթեջ, 4 բնակարան/: Բնակչության թիվը՝ 813 մարդ, որից 399՝ արական, 414՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 29 /կին՝ 12/:

11) Եղեգ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 1630.99 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1300 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27կմ, մայրաքաղաքից՝ 315կմ: Բնակելի տների թիվը՝ 61 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 94 մարդ, որից 53՝ արական, 41՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 13 /կին՝ 5/:

12) Նախկին Սյունիք գյուղի մեջ ներառված են Սյունիք, Սզնակ, Դիցմայրի, Բարգուշատ, Խորձոր բնակավայրերը: Սյունիք, Սզնակ, Դիցմայրի և Խորձոր գյուղերը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայրեր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Սյունիք, Սզնակ, Բարգուշատ, Դիցմայրի և Խորձոր գյուղերը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում:Տարածքը՝ 2217.2 հա: Բարձրությունը

ծովի մակերևույթից՝ 720 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ, մայրաքաղաքից՝ 289կմ:

Սյունիք բնակավայրի բնակելի տների թիվը՝ 98, որից՝ 81 առանձնատուն, 17 բազմաբնական շենք /քոթեջ, 101 բնակարան/: Բնակավայրի բնակչության թիվը՝ 764 մարդ, որից 376՝ արական, 388՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 10 /կին՝ 5/:

13) Սզնակ բնակավայրի բնակելի տների թիվը՝ 42 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 122, որից 61՝ արական, 61՝ իգական սեռի:

14) Դիցմայրի բնակավայրի բնակելի տների թիվը՝ 35 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 72, որից 45՝ արական, 27՝ իգական սեռի, գրանցված գործազուրկ թիվը՝ 2 /կին՝ 2/:

15) Բարգուշատ բնակավայրի բնակելի տների թիվը՝ 23 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 63, որից 33՝ արական, 30՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 3 /կին՝ 2/:

16) Խորձոր բնակավայրի բնակելի տների թիվը՝ 2 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 16, որից 10՝ արական, 6՝ իգական սեռի:

17) Խդրանց գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Խդրանց գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 696.74 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1030 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20կմ, մայրաքաղաքից՝ 308կմ: Բնակելի տների թիվը՝ 33 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 64 մարդ, որից 34՝ արական, 30՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 5:

18) Եղվարդ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Եղվարդ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 1295.05 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1135 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24,9 կմ, մայրաքաղաքից՝ 314կմ: Բնակելի տների թիվը՝ 125, որից՝ 124 առանձնատուն, 1 բազմաբնակարան շենք /քոթեջ, 4 բնակարան/: Բնակավայրի բնակչության թիվը՝ 284 մարդ, որից 149՝ արական, 135՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 17 /կին՝ 6/:

19) Ուժանիս գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Ուժանիս գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 1433.60 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 29կմ, մայրաքաղաքից՝ 317կմ: Բնակելի տների թիվը՝ 73, որից՝ 69 առանձնատուն, 4 բազմաբնակարան շենք /քոթեջ, 8 բնակարան/: Բնակավայրի բնակչության թիվը՝ 100 մարդ, որից 59՝ արական, 41՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 11 /կին՝ 6/:

20) Նախկին Ծավ գյուղի մեջ ներառված են Ծավ և Շիշկերտ բնակավայրերը: Տարածքը 12836.64 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1080 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից 37,5 կմ, մայրաքաղաքից՝ 334կմ:

Ծավ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Ծավ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: բնակավայրի բնակելի տների թիվը՝ 111, որից՝ 110

առանձնատուն, 1 բազմաբնակարան բնակելի շենք /4 բնակարան/: Բնակավայրի բնակչության թիվը՝ 318 մարդ, որից 168՝ արական, 150՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 7 /կին՝ 3/:

21) Շիշկերտ բնակավայրի բնակելի տների թիվը՝ 18 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 47 մարդ, որից 29՝ արական, 18՝ իգական, գրանցված գործազուրկների թիվը՝ 12 /կին՝ 5/:

22) Կաղնուտ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Կաղնուտ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 1154.09 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21,9կմ, մայրաքաղաքից՝ 311կմ: Բնակելի տների թիվը՝ 105 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 102 մարդ, որից 58՝ արական , 44՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 2 /կին՝ 1/:

23) Ձորաստան բնակավայրի տարածքը՝ 3330.73 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1210 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19,5կմ, մայրաքաղաքից՝ 287կմ: Բնակելի տների թիվը՝ 111 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 61 մարդ, որից 26՝ արական, 35՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 1:

24) Ճակատեն գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Ճակատեն գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 5532.21 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11կմ, մայրաքաղաքից՝ 311կմ: Բնակելի տների թիվը՝ 110 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 167 մարդ, որից 82՝ արական, 85՝ իգական:

25) Ներքին Խոտանան բնակավայրի տարածքը՝ 324.62 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1160 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21կմ, մայրաքաղաքից՝ 282կմ: Բնակելի տների թիվը՝ 59, որից 54՝ առանձնատուն, 5՝ բազմաբնակարան շենք /քոթեջ, 20 բնակարան/: Բնակչության թիվը՝ 72 մարդ, որից 42՝ արական, 30՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 3 /կին՝ 2/:

26) Ներքին Հանդ գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Ներքին Հանդ գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 6272.03 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 950 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36կմ, մայրաքաղաքից՝ 336կմ: Բնակելի տների թիվը՝ 22, որից 5՝ առանձնատուն, 17՝ բազմաբնակարան շենք /քոթեջ, 51 բնակարան/: Բնակչության թիվը՝ 118 մարդ, որից 62՝ արական, 56՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 3 /կին՝ 2/:

27) Նորաշենիկ բնակավայրի տարածքը՝ 1027,5 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1027.50 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19կմ, մայրաքաղաքից՝ 286կմ: Բնակելի տների թիվը՝ 83 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 110 մարդ, որից 65՝ արական, 45՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 12 /կին՝ 6/:

28) Շիկահող գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Շիկահող գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 4313.96 հա: Բարձրությունը ծովի

մակերևույթից՝ 980 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21կմ, մայրաքաղաքից՝ 321կմ: Բնակելի տների թիվը՝ 127, որից 125՝ առանձնատուն, 2՝ բազմաբնակարան շենք /քոթեջ 2 բնակարանով/: Բնակչության թիվը՝ 245 մարդ, որից 125՝ արական, 120՝ իգական սեռի, գրացված գործազուրկների թիվը՝ 7 /կին՝ 5/:

29) Շրվենանց բնակավայրի տարածքը՝ 514,35 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 514.35 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22կմ, մայրաքաղաքից՝ 284կմ: Բնակելի տների թիվը՝ 56 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 71 մարդ, որից 36՝ արական, 35՝ իգական սեռի, գրացված գործազուրկների թիվը՝ 3 /կին՝ 2/:

30) Չափնի գյուղը նախկինում ներառում էր Չափնի և Երկենանց բնակավայրերը: Չափնի գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 1047.57 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1040 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19կմ, մայրաքաղաքից՝ 308 կմ: Բնակելի տների թիվը՝ 55 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 89 մարդ, որից 52՝ արական, 37՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 4 /կին՝ 3/:

31) Երկենանց բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ, մայրաքաղաքից՝ 307 կմ: Բնակելի տների թիվը՝ 35 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 29 մարդ, որից 12՝ արական, 17՝ իգական սեռի:

32) Սրաշեն գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: ՀՀ կառավարության 18.12.2014թ N 1444-Ն որոշման համաձայն Սրաշեն գյուղը ներառված է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Տարածքը՝ 2122.13 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1025 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25կմ, մայրաքաղաքից՝ 324կմ: Բնակելի տների թիվը՝ 54 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 101 մարդ, որից 51՝ արական, 50՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 5 /կին՝ 3/:

33) Սևաքար գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 1874.27 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21կմ, մայրաքաղաքից՝ 310կմ: Բնակելի տների թիվը՝ 95, որից 93՝ առանձնատուն, 2՝ բազմաբնակարան շենք /քոթեջ, 4 բնակարան/: Բնակչության թիվը՝ 167 մարդ, որից 84՝ արական, 83՝ իգական, գրանցված գործազուրկների թիվը՝ 7 /կին՝ 4/:

34) Վանեք բնակավայրի տարածքը՝ 1652.28 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1240 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18կմ, մայրաքաղաքից՝ 289կմ: Բնակելի տների թիվը՝ 36 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 66 մարդ, որից 31՝ արական, 35՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 9 /կին՝ 5/:

35) Վարդավանք գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 777.89 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 15կմ, մայրաքաղաքից՝ 303կմ: Բնակելի տների թիվը՝ 34 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 118 մարդ, որից 63՝ արական, 55՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 9 /կին՝ 4/:

36) Վերին Խոտանան գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 2262.46 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1360 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25կմ, մայրաքաղաքից՝ 278կմ: Բնակելի տների թիվը՝ 143, որից 142՝ առանձնատուն, 1՝ բազմաբնակարան շենք /քոթեջ, 2 բնակարան/: Բնակչության թիվը՝ 206 մարդ, որից 107՝ արական, 99՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 12 /կին՝ 7/:

37) Տանձավեր գյուղը ՀՀ կառավարության 17.11.1998թ N 713 որոշման համաձայն սահմանամերձ բնակավայր է: Տարածքը՝ 1677.81 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33կմ, մայրաքաղաքից՝ 268կմ: Բնակելի տների թիվը՝ 75 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 178 մարդ, որից 96՝ արական, 82՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 10 /կին՝ 7/:

38) Տավրուս բնակավայրի տարածքը՝ 724,17 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21կմ, մայրաքաղաքից՝ 284կմ: Բնակելի տների թիվը՝ 32 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 96 մարդ, որից՝ 45 արական, 51 իգական սեռի:

39) Օխտար բնակավայրի տարածքը՝ 719.33 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16կմ, մայրաքաղաքից՝ 288կմ: Բնակելի տների թիվը՝ 44 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 89 մարդ, որից 51՝ արական, 38՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 4 /կին՝ 2/:

Գրանցված գործազուրկների թվում գերակշռում են կանայք:

Կապան քաղաքի առաջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1965 թվականին:

Կապան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատվել է 2006թ. նոյեմբերի 30-ի N 1729-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ: Իսկ 2015թ. հոկտեմբերի 8-ին Կապան համայնքի ավագանու N 68-Ա որոշմամբ հաստատվել են գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները: Կապան համայնքի ավագանին 2021 թվականի մարտի 17-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սյունիք 1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Կապան համայնքի Ազարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Եղեգ, Եղվարդ, Ուժանիս, Խդրանց, Ծավ, Շիշկերտ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Չափնի, Սևաքար, Սյունիք, Դիցմայրի, Խորձոր, Սզնակ, Բարգուշատ, Սրաշեն, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Օխտար բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ և Կապան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված տարբերակի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին» թիվ 31-Ա որոշումը:

Կապան համայնքի տարածքը **79981,45** հա է /տես աղյուսակ 1/:

**Աղյուսակ 1**

| Հ/Հ | Անվանումը | Տարածքը /հա/ |
|---|---|---|
| 1 | Կապան | 4863,89 |
| 2 | Ազարակ | 1850,65 |
| 3 | Աղվանի | 965,92 |
| 4 | Աճանան | 799,84 |
| 5 | Անտառաշատ | 2266,48 |
| 6 | Առաջաձոր | 1286,93 |
| 7 | Արծվանիկ | 2819,17 |
| 8 | Գեղանուշ | 7690,22 |
| 9 | Դավիթ Բեկ | 2001,73 |
| 10 | Եղեգ | 1630,99 |

| | | |
|---|---|---|
| 11 | Եղվարդ | 1295,05 |
| 12 | Խդրանց | 696,74 |
| 13 | Ծավ | 12836,64 |
| 14 | Կաղնուտ | 1154,09 |
| 15 | Ձորաստան | 3330,73 |
| 16 | Ճակատեն | 5532,21 |
| 17 | Ներքին Խոտանան | 324,62 |
| 18 | Ներքին Հանդ | 6272,03 |
| 19 | Նորաշենիկ | 1027,5 |
| 20 | Շիկահող | 4313,96 |
| 21 | Շրվենանց | 514,35 |
| 22 | Չափնի | 1047,57 |
| 23 | Սևաքար | 1874,27 |
| 24 | Սյունիք | 2217,2 |
| 25 | Սրաշեն | 2122,13 |
| 26 | Վանեք | 1652,28 |
| 27 | Վարդավանք | 776,89 |
| 28 | Վերին Խոտանան | 2262,46 |
| 29 | Տանձավեր | 1677,81 |
| 30 | Տավրուս | 724,17 |
| 31 | Ուժանիս | 1433,6 |
| 32 | Օխտար | 719,33 |
| **Ընդամենը** | | **79981,45** |

Ըստ տարածագնահատման գոտիների սահմանված են հետևյալ կադաստրային արժեքները.

- 10 րդ գոտի - Կապան քաղաք – 6834,3 դրամ,
- 11-րդ գոտի - Կապան քաղաք - 4441,8 դրամ,
- 12-րդ գոտի - Կապան քաղաք - 2887,5 դրամ,
- 13-րդ գոտի - Կապան քաղաք - 1877,7 դրամ,
- 14-րդ գոտի - Կապան քաղաք – 1221 դրամ,
- 15-րդ գոտի - Սյունիք գյուղ Կապան քաղաք - 792 դրամ,
- 16-րդ գոտի - Կապան քաղաք – 514,8 դրամ,
- 17-րդ գոտի - Աճանան, Արծվանիկ, Դավիթ Բեկ գյուղեր - 336,6 դրամ,
- 18-րդ գոտի - Գեղանուշ, Նորաշենիկ, Վերին Խոտանան գյուղեր - 217,8 դրամ,
- 19-րդ գոտի - Եղվարդ, Կաղնուտ, Ձորաստան, Ներքին Խոտանան, Շրվենանց, Սևաքար գյուղեր – 141,9 դրամ,
- 20-րդ գոտի – Ազարակ, Խդրանց, Աղվանի, Առաջաձոր, Եղեգ, Ուժանիս, Ծավ, Ճակատեն, Շիկահող, Չափնի, Սրաշեն, Վանեք, Վարդավանք, Տանձավեր, Տավրուս, Օխտար, Անտառաշատ գյուղեր – 92,4 դրամ:

Աղյուսակ 2

| | 2022թ. | 2023թ. | 2024թ. | 2025թ. | 2026թ. |
|---|---|---|---|---|---|
| Հողերի օտարում | 1.0 հա | 1.0 հա | 1.2 հա | 1.2 հա | 1.2 հա |
| Բյուջետային մուտքեր | 30 000 000 դրամ | 30 000 000 դրամ | 35 000 000 դրամ | 35 000 000 դրամ | 35 000 000 դրամ |

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջոցով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված տեղեկատվության, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Կապան համայնքում գրանցված է 44062 մարդ, որից կանայք՝ 22353, տղամարդիկ՝ 21709 /տես աղյուսակ 3/:

Աղյուսակ 3

| Ծննդյան տարեթիվը | Բնակչության քանակը | Արական | Իգական |
|---|---|---|---|
| 2021 | 440 | 242 | 198 |
| 2020 | 458 | 252 | 206 |
| 2019 | 423 | 215 | 208 |
| 2018 | 524 | 271 | 253 |
| 2017 | 464 | 237 | 227 |
| 2016 | 535 | 272 | 263 |
| 2015 | 527 | 271 | 256 |
| 2014 | 532 | 263 | 269 |
| 2013 | 505 | 267 | 238 |
| 2012 | 579 | 304 | 275 |
| 2011 | 528 | 251 | 277 |
| 2010 | 567 | 312 | 255 |
| 2009 | 558 | 294 | 264 |
| 2008 | 536 | 275 | 261 |
| 2007 | 512 | 277 | 235 |
| 2006 | 500 | 244 | 256 |
| 2005 | 487 | 266 | 221 |
| 2004 | 501 | 282 | 219 |
| 2003 | 424 | 196 | 228 |
| 2002 | 369 | 144 | 225 |
| 2001 | 496 | 271 | 225 |
| 2000 | 439 | 209 | 230 |
| 1999 | 423 | 215 | 208 |
| 1998 | 459 | 233 | 226 |
| 1997 | 464 | 222 | 242 |

| | | | |
|---|---|---|---|
| 1996 | 486 | 250 | 236 |
| 1995 | 522 | 260 | 262 |
| 1994 | 461 | 250 | 211 |
| 1993 | 448 | 229 | 219 |
| 1992 | 589 | 295 | 294 |
| 1991 | 713 | 369 | 344 |
| 1990 | 795 | 409 | 386 |
| 1989 | 822 | 437 | 385 |
| 1988 | 780 | 392 | 388 |
| 1987 | 819 | 438 | 381 |
| 1986 | 808 | 420 | 388 |
| 1985 | 811 | 402 | 409 |
| 1984 | 798 | 426 | 372 |
| 1983 | 801 | 414 | 387 |
| 1982 | 741 | 373 | 368 |
| 1981 | 714 | 370 | 344 |
| 1980 | 728 | 394 | 334 |
| 1979 | 684 | 369 | 315 |
| 1978 | 663 | 345 | 318 |
| 1977 | 609 | 335 | 274 |
| 1976 | 607 | 319 | 288 |
| 1975 | 556 | 284 | 272 |
| 1974 | 550 | 291 | 259 |
| 1973 | 564 | 270 | 294 |
| 1972 | 505 | 249 | 256 |
| 1971 | 520 | 259 | 261 |
| 1970 | 529 | 260 | 269 |
| 1969 | 478 | 251 | 227 |
| 1968 | 445 | 214 | 231 |
| 1967 | 461 | 226 | 235 |
| 1966 | 506 | 234 | 272 |
| 1965 | 532 | 246 | 286 |
| 1964 | 564 | 268 | 296 |
| 1963 | 623 | 315 | 308 |
| 1962 | 715 | 330 | 385 |
| 1961 | 682 | 309 | 373 |
| 1960 | 723 | 330 | 393 |
| 1959 | 704 | 323 | 381 |
| 1958 | 718 | 332 | 386 |

| | | | |
|---|---|---|---|
| 1957 | 672 | 297 | 375 |
| 1956 | 611 | 271 | 340 |
| 1955 | 576 | 261 | 315 |
| 1954 | 571 | 240 | 331 |
| 1953 | 423 | 195 | 228 |
| 1952 | 460 | 195 | 265 |
| 1951 | 388 | 161 | 227 |
| 1950 | 346 | 151 | 195 |
| 1949 | 342 | 128 | 214 |
| 1948 | 276 | 117 | 159 |
| 1947 | 228 | 91 | 137 |
| 1946 | 197 | 87 | 110 |
| 1945 | 129 | 59 | 70 |
| 1944 | 90 | 33 | 57 |
| 1943 | 90 | 31 | 59 |
| 1942 | 140 | 56 | 84 |
| 1941 | 179 | 69 | 110 |
| 1940 | 205 | 76 | 129 |
| 1939 | 219 | 85 | 134 |
| 1938 | 149 | 50 | 99 |
| 1937 | 165 | 62 | 103 |
| 1936 | 131 | 38 | 93 |
| 1935 | 115 | 53 | 62 |
| 1934 | 56 | 20 | 36 |
| 1933 | 64 | 20 | 44 |
| 1932 | 53 | 24 | 29 |
| 1931 | 43 | 18 | 25 |
| 1930 | 32 | 14 | 18 |
| 1929 | 28 | 11 | 17 |
| 1928 | 18 | 8 | 10 |
| 1927 | 16 | 7 | 9 |
| 1926 | 9 | 2 | 7 |
| 1925 | 6 | 2 | 4 |
| 1924 | 4 | 1 | 3 |
| 1923 | 2 | 1 | 1 |
| 1922 | 1 | 1 | |
| 1921 | 1 | 1 | |
| 1920 | 1 | | 1 |
| 1919 | 1 | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 1913 | 1 | 1 | |
| **Ընդամենը** | 44062 | 21709 | 22353 |

Աղյուսակ 4-ում բերված է համայնքի բնակչությունը ըստ բնակավայրերի

*Աղյուսակ 4*

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Բնակչություն 01.01.2022թ դրությամբ | | |
|---|---|---|---|---|
| | | իգական | արական | ընդամենը |
| 1 | Կապան | 19132 | 18280 | 37412 |
| 2 | Ագարակ | 83 | 86 | 169 |
| 3 | Աղվանի | 29 | 36 | 65 |
| 4 | Աճանան | 114 | 119 | 233 |
| 5 | Անտառաշատ | 56 | 64 | 120 |
| 6 | Առաջաձոր | 77 | 74 | 151 |
| 7 | Արծվանիկ | 339 | 369 | 708 |
| 8 | Գեղանուշ | 159 | 149 | 308 |
| 9 | Գոմարան | 26 | 28 | 54 |
| 10 | Դավիթ Բեկ | 414 | 399 | 813 |
| 11 | Եղեգ | 41 | 53 | 94 |
| 12 | Եղվարդ | 135 | 149 | 284 |
| 13 | Խդրանց | 30 | 34 | 64 |
| 14 | Ծավ | 150 | 168 | 318 |
| 15 | Ճիշկերտ | 18 | 29 | 47 |
| 16 | Կաղնուտ | 44 | 58 | 102 |
| 17 | Ձորաստան | 35 | 26 | 61 |
| 18 | Ճակատեն | 85 | 82 | 167 |
| 19 | Ներքին Խոտանան | 30 | 42 | 72 |
| 20 | Ներքին Հանդ | 56 | 62 | 118 |
| 21 | Նորաշենիկ | 45 | 65 | 110 |
| 22 | Շիկահող | 120 | 125 | 245 |
| 23 | Շրվենանց | 35 | 36 | 71 |
| 24 | Չափնի | 37 | 52 | 89 |
| 25 | Ըրկենանց | 17 | 12 | 29 |
| 26 | Սևաքար | 83 | 84 | 167 |
| 27 | Սյունիք | 388 | 376 | 764 |
| 28 | Բարգուշատ | 30 | 33 | 63 |
| 29 | Դիցմայրի | 27 | 45 | 72 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | Խորձոր | 6 | 10 | 16 |
| 31 | Սզնակ | 61 | 61 | 122 |
| 32 | Սրաշեն | 50 | 51 | 101 |
| 33 | Վանեք | 35 | 31 | 66 |
| 34 | Վարդավանք | 55 | 63 | 118 |
| 35 | Վերին Խոտանան | 99 | 107 | 206 |
| 36 | Տանձավեր | 82 | 96 | 178 |
| 37 | Տավրուս | 51 | 45 | 96 |
| 38 | Ուժանիս | 41 | 59 | 100 |
| 39 | Օխտար | 38 | 51 | 89 |
| **Ընդամենը** | | **22353** | **21709** | **44062** |

Վերջին տարիներին Կապան քաղաքում չի իրականացվել փախստականների հաշվառում. մոտավոր տվյալներով առկա են 30-35 փախստական ընտանիքներ: Ութսունվեց փախստականներ էլ բնակվում են Օխտար, Վարդավանք և Աճանան գյուղերում:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված 190 ընտանիք:

### *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

2021 թվականի հաշվետու տարում Կապան համայնքի բյուջեով կանխատեսվել էր շուրջ 5593503.9 հազար դրամ բյուջետային եկամուտների ստացում, որի դիմաց փաստացի հավաքագրումը կազմել է 4182402.9 հազար դրամ՝ ապահովելով կանխատեսված ցուցանիշի 74.8%-ը:

2022 թվականի Կապան համայնքի բյուջեով եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 3103724.6 հազար դրամ, որը 247706.2 հազար դրամով ավել է 2021թ նույն ցուցանիշից և 101890,0 հազար դրամով՝ 2020 թվականի կատարողականից:

2021 թվականի եկամուտների ընդհանուր ծավալի սեփական եկամուտները կազմում են 1122279,2 հազար դրամ:

Համայնքի 2022 թվականի բյուջեի ընթացիկ ծախսերի 55,6%-ը կամ 1726481,7 հազար դրամը կազմում է աշխատավարձի ֆոնդը, ինչը կազմվել է հիմք ընդունելով Կապան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 143-Ա և N 144-Ա որոշումներով հաստատված հաստիքացուցակները:

Համայնքում գործազուրկների հաշվառում չի իրականացվել: Գործազրկության հիմնական պատճառներն են աշխատատեղերի սակավությունը, տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը, ստվերային գործազրկությունը, մասնավոր հատվածում ոչ նորմավորված աշխատանքային պայմանները և ցածր աշխատավարձը: Կապանում մեծ է հատկապես կանանց գործազրկությունը, քանի որ համայնքում հիմնական աշխատանքային ուղղվածությունը շինարարությունը և

հանքարդյունաբերությունն է: Համայնքի բնակիչների սոցիալական պայմանները բարելավելու և սոցիալական խնդիրները լուծելու համար համայնքապետարանն անապահով խավերին ամեն տարի և պարբերաբար տրամադրում է տարբեր բնույթի սոցիալական օգնություններ. դրամական միջոցների, սննդի փաթեթների, վառելափայտի, շինանյութի տեսքով: Բացի դրանից, համայնքապետարանը հանրության սոցիալական խնդիրների լուծման համար պարբերաբար միջնորդություններ է ներկայացնում պետական համապատասխան կառույցներին:

Կապան համայնքի բնակչության սոցիալական իրավիճակի նկարագիր (տես աղյուսակ 5)

*Աղյուսակ 5*

| Հ/Հ | *Անվանումը* | *Ցուցանիշը /01.12.2021 դրությամբ/* |
|---|---|---|
| 1 | Գրանցված գործազուրկներ (մարդ), որից /կին/ | 793/568 |
| | - բարձրագույն կրթությամբ | 77/59 |
| | - միջին մասնագիտական կրթությամբ | 254/219 |
| | - նախնական մասնագիտական կրթությամբ | 108/62 |
| | - միջնակարգ կրթությամբ | 281/197 |
| | - հիմնական կրթությամբ | 73/31 |
| 2 | Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներ | 932 |
| | - որից նպաստառու | 788 |
| 3 | - Հաշմանդամներ, ընդամենը | 3364/1668 |
| | - 0-5 տարեկան հաշմանդամներ | 8/5 |
| | - 6-18 տարեկան հաշմանդամներ | 106/34 |

Գյուղական բնակավայրերում մեծ է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղվածների թիվը:

Կապան քաղաքում գործում են սննդի 1 հանրային շուկա, հանրային սննդի 56 օբյեկտ, 8 սուպերմարկետ, ոգելից խմիչքի վաճառքով զբաղվող առևտրի 44 օբյեկտ, ծխախոտի արտադրանքի վաճառքով զբաղվող առևտրի 11 օբյեկտ, ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքով զբաղվող առևտրի 195 օբյեկտ, զվարճանքի 2 օբյեկտ, սգո 4 ծառայություն, ոսկու վաճառքի 11 օբյեկտ, տեխնիկական հեղուկների վաճառքի 20 կետ, գազի լիցքավորման 8 կետ, 10 բենզինի լցակայան:

Կապան համայնքն ունի 14 ֆինանսավարկային կազմակերպություն (8 բանկ, 6 ՈՒՎԿ) /տես աղյուսակ 6 /:

*Աղյուսակ 6*

| *Հ/Հ* | *Կազմակերպության անվանումը* | *Հասցեն* |
|---|---|---|
| 1 | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան համայնք, Մ. Ստեփանյան փողոց, 3/12 տարածք |
| 2 | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ. Սյունիքի մարզ, Կապան համայնք, Շահումյան փողոց 1 շենք, Կենտրոնական հանրախանութի շենք |
| 3 | «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Մելիք Ստեփանյան 10 շենք, 33/2 |
| 4 | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԿԱՊԱՆ» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փողոց, 29/1, 4, 29/7 խանութ սրահ |
| 5 | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Թումանյան 1 |
| 6 | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Սյունիք» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 4 |
| 7 | «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ԿԱՊԱՆ» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Թումանյան 3/1/1 |
| 8 | «Արդշինբանկ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 3 |
| 9 | «Սեֆ Ինտերնեյշնլ Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» ՍՊԸ «Կապանի» մասնաճյուղ | ՀՀ. Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, 10 շենք, 33/1 |
| 10 | ««Արեգակ» ՈՒՎԿ» ՓԲԸ ԿԱՊԱՆԻ մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գարեգին Նժդեհ փողոց 12 շենք, 1 |
| 11 | «Նոր Հորիզոն» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Թումանյան 3/18 |
| 12 | «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ. Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փող., 2/1, թիվ 62 առևտրի սրահ |

| | | |
|---|---|---|
| 13 | «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Արամ Մանուկյան փ 1շ, 51 տարածք |
| 14 | «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փողոց 5ա/6, 10/2 գործարան |

Համայնքում գործում են նաև հաշվապահական, նոտարական, քաղաքաշինական, փաստաբանական, գրադարանային, թանգարանային, ապահովագրական, գազամատակարարման, ջրամատակարարման, էներգամատակարարման, կապի, տրանսպորտի, հյուրանոցառեստորանային, ավտոտեխսպասարկման, կենցաղային, տպագրական և այլ ծառայություններ:

Աղյուսակ 7

| Հ/Հ | *Արտադրություն իրականացնող ձեռնարկություններ* | *Սպառման շուկա* | *Հիմնական արտադրանք* |
|---|---|---|---|
| | *Արդյունաբերություն, ընդերքօգտագործում և այլն* | | |
| 1 | <<Կապանի լեռնահարստացման կոմբինատ>> ՓԲԸ | | հանքաարդյունաբերություն |
| 2 | <<Վայքլ>> ՍՊԸ | | Կրի արտադրություն |
| 3 | <<Կապանի ճանապարհների շահագործման և շինարարության>> ՍՊԸ | | Ասֆալտի, ավազի, խճի արտադրություն |
| 4 | Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ | | Ասֆալտի արտադրություն |
| 5 | Վիկարտ ՍՊԸ | | Ավազակոպճագլաքարային խառնուրդի արդյունահանում |
| 6 | Դեղալ ՍՊԸ | | Մարմարացված կրաքարի արդյունահանում |
| | *Գյուղատնտեսություն* | | |
| 1 | <<Մարիկա>> ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն |
| 2 | <<Վամաքս>> ՍՊԸ /Ֆերմա/ | Հայաստանի Հանրապետություն | կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն |
| 3 | <<Պորկպրոդ>> ՍՊԸ | Հայաստանի | մսի արտադրություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | Հանրապետություն | |
| 4 | <<Սյունիքի թռչնաֆաբրիկա>> ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | թռչնամսի արտադրություն |
| 5 | Ա/Ձ Էրիկ Թումանյան | Սյունիքի մարզ | Մսամթերքի արտադրություն |
| 6 | Ա/Ձ Արմինե Գրիգորյան | Սյունիքի մարզ | Կաթնամթերքի արտադրություն |
| 7 | <<Ագրո-Բիո պրոդուկտ>> ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | թռչնամսի, ալյուրի, կերի արտադրություն |
| 8 | <<Հայկ-Մարի>> ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | պահածոների արտադրություն |
| | *Այլ արտադրություններ* | | |
| 1 | <<Զանգեզուր հասկ>> ՍՊԸ | Կապան համայնք | Հացի և թարմ ալյուրե հրուշակեղենի արտադրություն |
| 2 | <<Ռուբիկ Իսրայելյան>> ՍՊԸ | Կապան համայնք | |
| 3 | <<Գեղեցիկ Քնար>> ՍՊԸ | Կապան համայնք | |
| 4 | <<Զառա ավիթ>> | Կապան համայնք | |
| 5 | <<Կապանի հաց>> ՍՊԸ | Կապան համայնք | |
| 6 | <<Առինզար>> ՍՊԸ | Կապան համայնք | |
| 7 | <<Պրոկոն>> ՍՊԸ /Սլադկոֆֆ խանութների ցանց/ | Սյունիքի մարզ, քաղաք Երևան | |
| 8 | <<ՕՖ-ԷԼԻ>> | Կապան համայնք | |
| 9 | <<Գոռ2 Արջ>> ՍՊԸ | Սյունիքի մարզ | |
| 10 | Նորա Ավագյան /Ծավ գյուղ/ | Կապան համայնք | |
| 11 | Դավիթ Ավագյան /Արծվանիկ գյուղ/ | Կապան համայնք | |

Համայնքում գործում են նաև արտահագուստի, կոշիկի, էլեկտրաէներգիայի, մետաղե կոնստուկցիաների և դրանց մասերի, բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների, դռների և լուսամուտների, շինարարական պլաստմասսե արտադրատեսակների և այլ արտադրություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշման համաձայն՝ համայնքի վարչական տարածքում առկա են 6 բնության հուշարձաններ /տես աղյուսակ 8/

Աղյուսակ 8

| Հ/Հ | Անվանումը /նկարագիրը | Տեղադիրքը |
|---|---|---|
| | *Երկրաբանական հուշարձաններ* | |
| 1 | «Անանուն» ապլիտային դայկաներ | Կապան քաղաքից 30-35 կմ հվ |
| 2 | «Փղի ճտեր» որմնաքանդակ | Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին |
| | *Ջրաերկրաբանական հուշարձաններ* | |
| 1 | «Արքայից» աղբյուր | Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ.-ից 1065 մ բարձրության վրա |
| 2 | «Կաթնաղբյուր» աղբյուր | Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա |
| | *Բնապատմական հուշարձաններ* | |
| 1 | Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ | Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցվանքի շրջակայքում |
| | *Կենսաբանական հուշարձաններ* | |
| 1 | «Շիրլյակ» | Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա |

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2322-Ն որոշման՝ Կապան խոշորացված համայնքում առկա են պետական ցուցակում ընդգրկված մեծ թվով պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ /տես աղյուսակ 9 /.

Աղյուսակ 9

| Հ/Հ | Անվանումը | Քանակը |
|---|---|---|
| 1 | Եկեղեցի | 85 |
| 2 | Ամրոց | 7 |
| 3 | Հուշարձան, հուշակոթող, հուշաղբյուր, արձան | 47 |
| 4 | Խաչքար | 60 |
| 5 | Վանական համալիր | 3 |

| | | |
|---|---|---|
| 6 | Հուշահամալիր | 3 |
| 7 | Մատուռ | 7 |

## Վահանավանք



10-11-րդ դարերում հայկական ճարտարապետական հուշարձան, վանական համալիր: Սյունիքի իշխանության, ապա թագավորության հոգևոր կենտրոններից: Գտնվում է Կապանից 3 կմ հյուսիս-արևմուտք, Ողջի գետի աջ ափի գեղատեսիլ անտառապատ լեռնալանջին:

Հիմնադրվել է Սյունիքի Ջագիկ իշխանի որդի Վահանի կողմից, որի անունով էլ կոչվեց:

Հուշարձանախմբի ամենահին կառույցը Վահան իշխանի կողմից 911թ. կառուցված սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Այն մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի տիպի, գլխավոր խորանով և զույգ ավանդատներով կառույց է:

Հետագայում Վահան իշխանի եղբորորդի Վահանը եկեղեցու արևմտյան կողմում կառուցել է կամարակապ թաղածածկ գավիթ և սյունասրահ, որը ձգվում է եկեղեցու և գավիթի հարավային երկարությամբ: Այստեղ են թաղված Սյունիքի թագավորներն ու իշխանները:

1086թ. Սյունյաց թագուհի Շահանդուխտը և նրա քույր Կատան կառուցել են վանքի հարավային մուտքը, իսկ նրա լայնաթռիչք թաղի վրա սբ Աստվածածին դամբարան եկեղեցին ու գավիթը: Վահանավանքում կան այլ շինություններ ու տնտեսական կառույցներ, աղբյուրներ, արձանագրություններ, խաչքարեր ու տապանաքարեր, որոնք թվագրում են 10-ից 11-րդ դարերով:

## Հալիձորի բերդ



Ուշ միջնադարի հայկական ճարտարապետական համալիր: Գտնվում է Կապան քաղաքից 1 կմ հարավ-արևմուտք, Ողջի գետի բարձրադիր աջ ափին: 17-րդ դարի առաջին կեսին բերդի տարածքում գործում էր կուսանոց անապատ, որը պարսպատելուց հետո ծառայում էր որպես Մելիք Փարսադանյանների տոհմական ամրոց: 1720-ական թվականներին իր անառիկ դիրքի շնորհիվ դարձել է Սյունիքի ազատագրական պայքարի կենտրոնը:

Հալիձորի բերդի մոտ Դավիթ Բեկն ու Մխիթար Սպարապետը 1725-27թթ. ջախջախել են թուրքական մեծաթիվ զորքերին:

Բերդի պարիսպներն ունեն տեղանքից բխող անկանոն քառանկյան ձև: Երկու կամարակապ մուտքերը գտնվում են հարավային և հյուսիսային պարիսպների մեջ: Միակ կլոր բուրգը գտնվում է ամրոցի հարավ արևմտյան անկյունում: Բերդում կան երկու եկեղեցի, տնտեսական և բնակելի շենքերի մնացորդներ: Եկեղեցիներից մեկը կառուցված է անմշակ բազալտի խոշոր քարերով: Ունի թաղածածկ դահլիճի հորինված, բեմի երկու կողմերում ավանդատները:

Եկեղեցուն հյուսիսից և հարավից կից կառուցված են երկհարկ գավիթներ: Տեղանքի թեքությունը մեղմելու նպատակով, հյուսիսային պարսպից մինչև արևելյան

պարիսպը ամրացվել է տեռասաձև պարսպապատով, որի շնորհիվ եկեղեցու արևելյան բակը ընդարձակվել է:

**Բաղաբերդ**



Միջնադարյան Հայաստանի ամրոցներից է Բաղաբերդը: Գտնվում է Կապանից 15 կմ հյուսիս-արևմուտք, Ողջի գետի ձախ ափին, լեռան բարձրադիր եռանկյունաձև գագաթին: Ըստ ավանդության Բաղաբերդը կառուցել է Բաղակը՝ Սիսակ նահապետի զարմից:

4-րդ դարում իշխան Անդոկ Սյունին Բաղաբերդի պարիսպների տակ պարտության է մատնել պարսից Շապուհ արքայի զորազնդերին: Բաղաբերդը 4-12-րդ դարերում ունեցել է ռազմաքաղաքական կարևոր նշանակություն, լինելով Սյունիքի իշխանության, ապա թագավորության կենտրոններից մեկը: 12-րդ դարի վերջին ավերվել է սելջուկների կողմից: Բնական պատնեշ ունենալով խոր կիրճերի ուղղաձիգ ժայռերը Բաղաբերդը շրջափակված է բոլորաձև աշտարակավոր, հաստ ու բարձր պարսպով: Որոշ տեղերում ժայռերը հղկվել և դարձել են բնական պարսպապատեր: Լեռան եռանկյունաձև գագաթին գտնվում է միջնաբերդը: Մուտքը հյուսիս-արևելյան կողմում է: Բաղաբերդի ավերակները բավականին լավ են պահպանված: Աստեղից տեսանելի է Բաղակի քար վանքի ավերակները:

**«Շիկահող» պետական արգելոց**



«Շիկահող» պետական արգելոցը ստեղծվել է 1958 թ-ին Կապանի անտառտնտեսության հողերի վրա ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի թիվ Պ-341, 13.09.1958 թ. որոշմամբ՝ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա գտնվող լայնատերև անտառների յուրահատուկ ֆլորան և ֆաունան պահպանելու, ուսումնասիրելու և վերականգնելու նպատակով: 1963 թ-ին այն վերափոխվել է Բարթասի արգելավայրի և վերականգնվել է որպես արգելոց միայն 1975 թ-ին: Պահպանության հիմնական օբյեկտներն են հանդիսանում լայնատերև (կաղնու, բոխու) անտառները, յուրահատուկ բուսական համակեցությունները (կենու, արևելյան սոսու և արևելյան հաճարենու պուրակները), դրանց բուսական և կենդանական աշխարհը /վայրենակերպ, հովազ, մուֆլոն, բեզոարյան այծ/:

Արգելոցը գտնվում է Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում և զբաղեցնում է 12073 հա տարածք: Արգելոցը բաղկացած է Շիկահողի և Մթնաձորի տեղամասերից: Մինչև 2006 թ-ը դրա տարածքը ավելի փոքր էր՝ 10330 հա:

Շիկահողը զբաղեցնում է Ծավ և Շիկահող գետերի ավազանները՝ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա և իր մեջ ներառում է Շախրուզ (2372 մ), Գյումարանց (2366 մ), Մազրա (2198 մ) և Բարթաս (2186 մ) լեռնագագաթները: Արգելոցին սահմանակցում են Շիկահող, Սրաշեն, Ծավ, Շիշկերտ և Ներքին Հանդ գյուղերը:

Արգելոցի սահմաններն անցնում են հարավում Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ մնացած կողմերից՝ վերը նշված գյուղերի համայնքային հողերի սահմաններով:

## «Սոսու պուրակ» արգելավայր



«Սոսու պուրակ» արգելավայրը իր մեջ ներառում է արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը: Այն ստեղծվել է 1958 թ-ին ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի (թիվ Պ-341) որոշմամբ և այժմ զբաղեցնում է 64.2 հա տարածք:

Մինչև 2004 թ. այն գտնվում էր Կապանի անտառտնտեսության ենթակայության տակ, իսկ հետո բնապահպանական գործունեությունը խստացնելու նպատակով հանձնվել է «Շիկահող» արգելոցին:

Արգելավայրը գտնվում է «Շիկահող» արգելոցին կից Ծավ գետի հովտում՝ Ներքին Հանդ գյուղի մոտ ծովի մակարդակից 700-800 մ բարձրության վրա: Մարդու գործունեության ազդեցությունը մեղմացնելու համար արգելավայրը շրջապատված է մոտ 100 մ լայնություն ունեցող բուֆերային գոտով, որտեղ ընկած են Ներքին Հանդ գյուղի և Կապանի անտառտնտեսության հողերը:

Շնորհիվ ցածր ռելիեֆի, արգելավայրի կլիման մեղմ է ու բավականին տաք: Ձնածածկը ձևավորվում է ոչ ամեն տարի, արագ հալվում է և հասնում ոչ ավել, քան 10 սմ: Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 530 մմ:

Սոսու պուրակը ունի ձգված տեսք՝ Ծավ գետի երկայնքով 50-200 մ լայնությամբ և 10 կմ երկարությամբ: Պուրակի հիմքում ընկած են 200-250-ամյա հազարից ավել ծառեր, որոնք հասնում են 30-35 մ բարձրության և պահպանվել են մինչ այժմ: Բացի սոսուց, այստեղ աճում են նաև այլ արժեքավոր և հազվագյուտ տեսակներ՝ հունական ընկուզենին, արաքսյան կաղնին, հունական շրջահյուսը, թավշային իլենին և այլն:

Ողնաշարավորների ֆաունայից բավականին բազմազան են սողունները՝ 7 տեսակի մողեսներ, 8 տեսակի օձեր և 2 տեսակի կրիաներ: Հազվագյուտ տեսակներից հանդիպում են շերտավոր մերկաչքը, կատվաօձը և անդրկովկասյան սահնօձը:

## Սուրբ Կատերինա եկեղեցի [2]

«Կոնդուրովները հայտնի են իրենց բարենպաստ գործունեությամբ, որոնց պապը՝ Խաչլամպին /ժողովրդի մեջ հայտնի էր Ուստա Ալաիվերդի անունով/ շինել է տվել կամուրջներ գետակների վրա և մի հոյակապ եկեղեցի Բաշքենդ հունարնակ գյուղում», - գրում է «Մշակը»:



Եկեղեցու մուտքի ճակատին ամրացված մարմարե տախտակի վրա շինարար վարպետը ռուսերեն լեզվով արձանագրել է. «Քրիստոսի ծննդից հետո, 1865 թվականին, Համառուսաստանյան կայսր Ալեքսանդր 2-ի թագավորության և Կովկասի փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի օրոք, Վրաստանի պատրիարք, արքեպիսկոպոս, պայծառափայլ Եվսեի օրոք, տաճարս կերտվեց Կավարտի պղնձաձուլական գործարանին կից, կամքով Գյումուշխանեի փաշայության... ի հիշատակ սուրբ նախատակ Խաչլամպիի: Գյուխն այս շինության

---

[2] Գրիշա Սմբատյան, Սյունիքը փորձության մեջ, էջ 529-530

հանդիսանում է Խաղլամպի Կոնդուրովը, նույն ինքը՝ Ալավերդինսկի»:

Դատելով արձանագրության «ի հիշատակ սուրբ նահատակ Խաղլամպիի» տողերից, եկեղեցին կոչվում է Սբ Խառալամպի, սակայն տեղացիները եկեղեցին անվանում էին Սբ Կատերինա, որն ավելի տարածված էր, ինչպես նաև բերզեմների եկեղեցի, որ կնշանակի հույների եկեղեցի: Բարձունքին տիրող, հեռուներից տեսանելի Սբ Կատերինան ճարտարապետական հիասքանչ կոթող է: Մուգ դարչնագույն տուֆից կառուցված եկեղեցին լույսի ու արեգակի շողերի տակ, օրվա ընթացքում տարբեր գունավորումներ է ստանում, բերում խորհրդավորության ու թեթևության զգացում: Իսկ թե որտեղից է այս քարատեսակը՝ հայտնի չէ, թեև մարդիկ այս կողմերում կարծում են, թե բերվել է ուղտերով, Շուշիի մոտակայքի քարհանքերից /Շուշիից միշտ են այստեղ ջրաղացաքարեր բերվել/: Կառույցին յուրացուցիչ ամրություն են հաղորդում քարերը միմյանց ագուցող զամերը: Շինարարներր նաև հեռվից ջուր են հասցրել եկեղեցու բակը, որի մասին են վկայում պահպանված կավե փողրակները:

Եկեղեցու ճարտարապետական բնութագիրը ըստ ճարտարապետ Ց. Գևորգյանի. «Այն արտաքին ուղղանկյան մեջ պարփակված, կիսաշրջանաձև, միախորան, երկու կիսաշրջանաձև ավանդատներով /նաև արտաքինից/՝ խորանի հետ կամարաձև բացվածքներով կապակցված՝ եռանեֆ, թաղածածկ, բազիլիկ գմբեթավոր եկեղեցի է՝ արևմտյան մասում կրկնահարկ զանգակատնով: Ունեցել է կղմինդրե երկլանջ տանիք: Գմբեթը պղնձե թիթեղից է և ունի սլաքաձև տեսք: Զանգակատան տանիքը ևս նույն պղնձե նյութից է՝ վեղարաձև և ունի ութ նիստ: Պատերը տուֆից ու բազալտե քարերից են, արտաքին մասում շարվածքը սրբատաշ է: Ներքին հարդարումը իրականացվել է կրաշաղախե երեսվաղով: Լուսամուտների բացվածքները երիզված են դեղին երանգ ունեցող կրաքարերից: Քիվերը նույնպես դեղնավուն են կրաքարերից են: Գմբեթը ութանիստ է, որը հենվում է գմբեթատակ թմբուկի վրա, որոնք իրենց հերթին հենվում են չորս կլոր սյուների վրա, որոնց տրամագիծը 50 սմ է: Եկեղեցու հատակը և բեմը բնական քարե սալերից են: Հիմնականում արտաքին պատերի շարվածքը իրականացվել է 30 սմ բարձրությամբ բնական տուֆե քարերից: Մուտքն արևմտյան կողմից է»:

**Նապատ**

Ոչ միայն Բեխի, այլ ամբողջ Կապանի համար հետաքրքրություն է ներկայացնում հայտնի Նապատը՝ թե՛ իր ճարտարապետական կառույցներով, թե՛ իր հետ կապված լեգենդներով ու պատմություններով: Այն գտնվում է Բեխ թաղամասից մոտ 6 կմ հարավ-արևելք՝ բարձր լեռան արևելյան լանջին՝ անտառի մեջ:



Նապատը հնում հայտնի է եղել նաև Տանձափարախ անունով: Վտանգի ժամանակ ժողովուրդը ապաստանել էր այստեղ գտնվող միաբանների հետ միասին: Սա, փաստորեն, փոքրիկ ամրոց-դղյակ էր, ուր թե՛ պաշտպանվում էին և թե՛ կազմակերպում կրոնական արարողություններ: Հիմա էլ Նապատը կիսավեր վիճակում է և ծառայում է որպես ուխտագնացության վայր՝ շրջակա գյուղերի համար:

Այս յուրահատուկ սրբավայր-ամրոցի մասին գրել է Րաֆֆին «Դավիթ Բեկ» վեպում: Նրա մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում նաև Բեխ գյուղից գրող, բժիշկ, հասարակական գործիչ Ստեմելը (Ստեփան Մելիք-Փարսադանյան), ով ժամանակին գրառել է զրույցներ մեծերից: Բեխում Նապատի մասին զրույցները շարունակվում են նաև մեր օրերում: Սերունդները պատմում են դարեդար փոխանցված ավանդություններն ու լեգենդները:

«Հալիձորի անկումով՝ Դավիթ-Բեկը յուրայիններով պատսպարվում է Անապատ կոչուած ամրոցի մէջ: Այս բերդը կոչվում էր Անապատ այն պատճառով, որ նրա մեջ գործում էր մի կուսանոց, ուր, ասում են , կուսակրոն կյանքով ապրում, աղոթում և ապաշխարում էին շուրջ քառասուն միանձնուհիներ: Օսմանցիները, գետը անցնելուց հետո, պաշարեցին բերդը: Վեց օր տևեց պաշարումը: Թշնամին կրկնապատկում է իր զորությունը և վայրենի կատաղությամբ հարձակում գործում: Հասնում է օրհասական րոպեն: Այդ սարսափելի տագնապի մէջ, երբ մի կողմից շողում էին սրեր, հոսում էր արյուն, որոտում էին թնդանոթներ, մյուս կողմից՝ բարեպաշտ միանձնուհիների դասը հնչեցնում էր զանգակներ և աղերսում վերին օգնականությանը»,- գրում է Ստեմելը:

Տարեցները պատմում են. «Պաշարվածները քրիստոնյա հավատացյալներ էին և չէին վախենում նահատակվելուց: Նրանք դիմում էին աննկարագրելի քաջագործությունների, քանի որ իրենց հետ էին Դավիթ-Բեկը, Մխիթար Սպարապետը, Տեր-Ավետիսը և քաջարի այլ հրամանատարներ: Նրանք քաջածանոթ էին տեղանքին և մայրամուտին հարձակվեցին թշնամու վրա: Թշնամին սարսափահար ճողոպրեց: Կռվին միացավ նաև Դավիթ-Բեկը, և թշնամին ջարդվեց, իսկ նրա մնացորդները փախուստի դիմեցին Ղափանի սահմաններից»:

Տանձափարախը (Նապատ) հետագայում վերականգնվել է: Այստեղ ճգնակյաց կյանք էին վարում վարդապետները: Ասում են, որ նրանք նույնիսկ միջնադարյան գրիչների օրինակով մատյաններ էին գրում:

Դարեր են եկել ու անցել, իսկ Նապատը մնացել է որպես սրբավայր և ուխտատեղի: Մեր օրերում նույնիսկ այստեղ հարսանիքներ են անցկացվում:

Նապատ հավանաբար նույն անապատ բառն է, որ տեղի բարբառին բնորոշ հնչյունափոխությամբ սկզբի ա հնչյունը թուլացել է և վերածվել ը-ի, իսկ հետագայում ամբողջովին դուրս մնացել:

Կապան քաղաքի կենտրոնից գտնվում է 10 կմ հեռավորության վրա:

***

Կապան համայնքի վարչական տարածքում գործում են 32 հանրակրթական՝ 20 միջնակարգ, 10 հիմնական, 2 ավագ դպրոցներ: Համայնքում գործում են նաև 1 հատուկ դպրոց, 3 քարձրագույն, 4 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ /1-ի գործունեությունը դադարեցված է 01.09.2021թ/, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական աջակցման կենտրոնի Կապանի մասնաճյուղը և «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը: Համայնքային ենթակայությամբ գործում են 16 նախադպրոցական և 9 արտադպրոցական ուսումնական հաստատություններ, «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ը, «Կապանի արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ը, «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ը, «Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ը, «Կապանի Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ը, ինչպես նաև «Կապանի կոմունալ ծառայություն», «Կապանի ՊԼԱՍՏԻՆ» և «Կապանի հաշվապահական

ծառայությունների կենտրոն» ՀՈԱԿ-ները: Համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում պարբերաբար կատարվում են հիմնանորոգման, ընթացիկ նորոգման և վերազինման աշխատանքեր, սակայն ենթակառույցներում դեռևս առկա է շենքային պայմանների բարելավման և կոշտ, փափուկ և մասնագիտական գույքի ձեռքբերման անհրաժեշտություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններից երկուսը՝ N 5 և N 12, ոչ տիպային շենքային պայմաններ ունեն՝ տեղակայված են բազմաբնակարան բնակելի շենքերի առաջին հարկում: Համայնքի հեռավոր թաղամասերի նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը ՆՈՒՀ ապահովելու և Դավիթ Բեկ և Լեռնագործներ թաղամասերում նախադպրոցական ուսումնական հաստատություն ունենալու անհրաժեշտությունից ելնելով՝ 2015 թվականից սկսվել է «Կապանի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցումը նախադպրոցական ուսումնական հաստատության» ծրագիրը: Ծրագրի ավարտից հետո մոտ 140 երեխա հնարավորություն կունենա ստանալ նախադպրոցական կրթություն, կստեղծվի նաև մոտ 33 նոր աշխատատեղ: Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է նաև գյուղական բնակավայրերում նախադպրոցական կրթության ապահովման խնդիրը: Ներկա պահին ընթացքի մեջ է Վարդավանք բնակավայրում նախադպրոցական այլընտրանքային խումբ ստեղծելու նպատակով շենքի նորոգումը: Համայնքապետարանի աշխատակիցների կողմից ուսումնասիրվել են նաև մյուս գյուղական բնակավայրերում այլընտրանքային ծրագրերով նախադպրոցական կրթության ապահովման հնարավորությունները և անհրաժեշտությունը: Ներկա պահին այլընտրանքային խմբեր գործում են Գեղանուշ և Եղվարդ գյուղերում:

Համայնքում գործող ուսումնական հաստատությունների ցանկը բերված է աղյուսակ 10-ում:

*Աղյուսակ 10*

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Բաց նախագծի տեղերի թիվը | Փաստացի սաների թիվը | Աշխատողների թիվը |
|---|---|---|---|---|
| *Հանրակրթական դպրոցներ* | | | | |
| 1 | «Կապանի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 1176 | 511 | 61 |
| 2 | «Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ | 450 | 300 | 45 |
| 3 | «Կապանի N 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 850 | 820 | 81 |
| 4 | «Կապանի N 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 90 | 27 | 20 |
| 5 | «Կապանի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 1200 | 601 | 64 |
| 6 | «Կապանի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 960 | 843 | 62 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | «Անդրանիկ Մարգարյանի անվան Կապանի թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 846 | 765 | 74 |
| 8 | «Կապանի N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 156 | 94 | 30 |
| 9 | «Կապանի Հունան Ավետիսյանի անվան N 9 ավագ դպրոց» ՊՈԱԿ | 420 | 276 | 37 |
| 10 | «Կապանի N 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 494 | 290 | 43 |
| 11 | «Կապանի Ռաֆայել Մինասյանի անվան թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 130 | 76 | 30 |
| 12 | «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 70 | 59 | 21 |
| 13 | «Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 800 | 479 | 60 |
| 14 | «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 168 | 65 | 26 |
| 15 | «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 241 | 125 | 40 |
| 16 | «Դավիթբեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 460 | 36 | 21 |
| 17 | «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 220 | 91 | 30 |
| 18 | Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 150 | 35 | 22 |
| 19 | «Ավ. Սարդարյանի անվան Ագարակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 190 | 8 | 11 |
| 20 | «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 100 | 31 | 25 |
| 21 | «Նորաշենիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 60 | 25 | 17 |
| 22 | «Աճանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 200 | 76 | 24 |
| 23 | «Պողոս Տեր Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ | 180 | 15 | 14 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դպրոց» ՊՈԱԿ | | | |
| 24 | «Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 65 | 7 | 14 |
| 25 | «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 200 | 11 | 22 |
| 26 | «Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 200 | 27 | 26 |
| 27 | «Օխտարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 100 | 38 | 24 |
| 28 | «Վարդավանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 80 | 20 | 15 |
| 29 | «Ճակատենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 45 | 7 | 11 |
| 30 | Տավրուսի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ | 39 | 9 | 11 |
| 31 | «Տանձավերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 192 | 8 | 17 |
| 32 | «Աղվանիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | 60 | 2 | 9 |
| *Հատուկ դպրոց* | | | | |
| 1 | «Կապանի N 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, այդ թվում | 316 | 157 | 83 |
| 1.1 | Հանրակրթական | | 91 | |
| 1.2 | Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագիր | | 66 | |
| *Աջակցության կենտրոններ* | | | | |
| 1 | «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | | 140 | 59 |
| 2 | «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | | 151 | 40 |
| *Բարձրագույն ուսումնական հաստատություններ* | | | | |
| 1 | «Հայաստանի ազգային | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ» (ՀԱՊՀ) հիմնադրամ | 720 | 380 | 79 |
| 2 | Երևանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ներկայացուցչություն | | 125 | 2 |
| 3 | «Եվրոպական համալսարան» հիմնադրամ | 300 | 300 | 29 |
| *Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ* | | | | |
| 1 | «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ | 500 | 390 | 64 |
| 2 | «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ | 300 | 118 | 54 |
| 3 | «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ | 250 | 96 | 50 |
| 4 | «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ /01.09.2021թ-ից գործունեությունը կասեցվել է/ | | | |
| *Նախադպրոցական ուսումնական հաստատություններ* | | | | |
| 1 | «Կապանի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 166 | 30 |
| 2 | «Կապանի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 115 | 27 |
| 3 | «Կապանի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 115 | 170 | 34+1 սեզոնային |
| 4 | «Կապանի թիվ 5 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 115 | 89 | 23 |
| 5 | «Կապանի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 181 | 34 |
| 6 | «Կապանի թիվ 7 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 167 | 30 |
| 7 | «Կապանի թիվ 8 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 160 | 153 | 36 |
| 8 | «Կապանի թիվ 9 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 156 | 30 |
| 9 | «Կապանի թիվ 10 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 140 | 98 | 24 |
| 10 | «Կապանի թիվ 11 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 25 | 17 | 8 |
| 11 | «Կապանի թիվ 12 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 100 | 100 | 26 |
| 12 | «Կապանի թիվ 13 ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 280 | 116 | 27 |
| 13 | «Արծվանիկի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 20 | 20 | 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | «Դավիթ Բեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 25 | 14 | 4 |
| 15 | «Ծավի ՆՈՒՀ» ՀՈԱԿ | 24 | 5 | 4 |
| 16 | «Սյունիքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | | 29 | 11 |
| 17 | Գեղանուշ բնակավայրի այլընտրանքային խումբ | | 6 | |
| 18 | Եղվարդ բնակավայրի այլընտրանքային խումբ | | 7 | |
| *Արտադպրոցական ուսումնական հաստատություններ* | | | | |
| 1 | «Կապանի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | 265 | 45 |
| 2 | «Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | 183 | 34 |
| 3 | «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | 104 | 24 |
| 4 | «Կապանի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ | | 240 | 24 |
| 5 | «Կապանի գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ | | 55 | 11 |
| 6 | «Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ | | 251 | 17 |
| 7 | «Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | | 131 | 18 |
| 8 | «Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | | 233 | 20 |
| 9 | «Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | | 201 | 16 |
| Մանկական կենտրոն | | | | |
| | «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ | | 78 | 11 |

Կապանում բնակչության բուժսպասարկումն իրականացվում է համայնքում գործող առողջապահական հիմնարկների կողմից: Կապանում հիմնական ստացիոնար բուժսպասարկումն իրականացնում է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, իսկ ամբուլատոր բուժսպասարկումը՝ կենտրոնի կազմում ընդգրկված «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկան: Բժշկական կենտրոնը հիմնանորոգվել և վերազինվել է 2015 թվականին, սակայն պոլիկլինիկան ունի վերանորոգման կարիք: 2021 թվականին «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում բացվել է մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (MPT) բաժանմունքը:

Համայնքում գործում է նաև «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն: Դիսպանսերը կապիտալ հիմնանորոգվել է 2005 թվականին: Առաջիկա տարիներին նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգում և վերազինում:

Բժշկական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 11-ում:

*Աղյուսակ 11*

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Քանակը |
|---|---|---|
| I | **«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ** | 1 |
| 1 | Բուժանձնակազմ | |
| 1.1 | բժիշկներ | 34 |
| 1.2 | միջին բուժանձնակազմ | 81 |
| 1.3 | կրտսեր բուժանձնակազմ | 32 |
| 2 | Վարչական աշխատողների թիվը | 5 |
| 3 | Օժանդակ հաստիքների թիվը | 68,85 |
| 4 | Մահճակալների թիվ | 85 |
| 5 | Շտապ օգնության մեքենաների թիվը | 9 |
| 6 | **Բուժակ մանկաբարձական-կետեր** | |
| 6.1 | Արծվանիկ, Դավիթ Բեկ, Ըրկենանց, Կաղնուտ, Չափնի, Սևաքար, Եղեգ, Եղվարդ, Ագարակ, Ուժանիս, Խդրանց, Սյունիք, Դիցմայրի, Բարգուշատ, Վարդավանք, Սզնակ, Գեղանուշ, Գոմարան | |
| 7 | Առողջության առաջնային պահպանման կենտրոն | 4 |
| 7.1 | Շինարարների ԸԲԳ, Լեռնագործների ԸԲԳ, Բաղաբերդի ԸԲԳ, Ձորքի ԸԲԳ | |
| 8 | Սպասարկվող բնակչության թիվը | 45083 |
| II | **«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ** | 1 |
| 1 | Բուժանձնակազմ որից՝ | |
| 1.1 | բժիշկներ | 3 |
| 1.2 | միջին բուժանձնակազմ | 13 |
| 1.3 | կրտսեր բուժանձնակազմ | 20 |
| 2 | Վարչական աշխատողների թիվը | 7 |

| | | |
|---|---|---|
| 3 | այլ գործունեության անձնակազմ | 12 |
| 4 | Մահճակալների թիվ | 80 |
| 5 | Սպասարկվող բնակչության թիվը | 34537 |
| III | **«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա** | 1 |
| 1 | Բուժանձնակազմ որից՝ | |
| 1.1 | բժիշկներ | 44 |
| 1.2 | միջին բուժանձնակազմ | 90 |
| 1.3 | կրտսեր բուժանձնակազմ | 7 |
| 2 | Վարչական աշխատողների թիվը | 1 |
| 3 | Օժանդակ հաստիքների թիվը | 46,5 |
| IV | **«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիքի» մասնաճյուղ** | 1 |
| 1 | Բուժանձնակազմ որից՝ | |
| 1.1 | բժիշկներ | 7 |
| 1.2 | միջին բուժանձնակազմ | 29 |
| 1.3 | կրտսեր բուժանձնակազմ | 5 |
| 2 | Վարչական աշխատողների թիվը | 7 |
| 3 | Օժանդակ աշխատողների թիվը | 13 |
| 2 | Տրանսպորտային միջոցների քանակը | 2 |
| V | **«Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն»ՊՈԱԿ** | 1 |
| 1 | Բուժանձնակազմ որից՝ | |
| 1.1 | բժիշկներ | 2 |
| 1.2 | միջին բուժանձնակազմ | 18 |
| 2 | Վարչական աշխատողների թիվը | 2 |
| 3 | Օժանդակ աշխատողների թիվը | 1 |
| 4 | Սպասարկվող բնակչության թիվը | 1689 |
| 5 | Բուժակ մանկաբարձական կետեր՝ | 19 |
| 5.1 | Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Ծավ, Շիշկերտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Սրաշեն, Վանեք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Օխտար | |

Համայնքում գործում են նաև «Ախտահանման կենտրոն» ՓԲ ընկերության Կապանի մասնաճյուղը, «Հիգեա» բժշկական կենտրոնը, «ԷԿՈՍԵՆՍ» ՍՊԸ-ի Կապանի մասնաճյուղը, «Պրոմ-տեստ» ՍՊԸ Կապանի մասնաճյուղը, Հոգեսոցիալական կարգավորման կենտրոնի Կապանի մասնաճյուղը, Սյունիքի թիվ 1 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովը, ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կլինիկաներ, դեղատներ և այլ առողջապահական հաստատություններ:

## *2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ*

Համայնքում իրականացվող և նախատեսվող ծրագրերի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ պետական բյուջե, համայնքային բյուջե, տեղական և միջազգային դոնոր կազմակերպություններ, համայնքի վարչական տարածքում գործող մասնավոր ընկերությունների ներդրումներ և այլն: Ծրագրերը ներկայացվում են ֆինանսական ամփոփաթերթում:

**Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրեր և միջոցառումներ, համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրեր** /տես աղյուսակ 12 /

Աղյուսակ 12

| | |
|---|---|
| **Թումո կենտրոնի ստեղծում** | Թումո կենտրոնը Կապանում լինելու է կենսունակ, դինամիկ և ռեսուրսներով հարուստ տարածք: Թումոյի առաքելությունն է պատանիներին տալ այնպիսի կրթություն, որը նրանց կդարձնի անկասելի: Կրթություն, որը լրացնում է նրանց դպրոցական կրթությունը և պատրաստում նրանց դառնալ համարձակ գյուտարարներ, ստեղծագործ ձեռնարեցներ և համաշխարհային շուկայի մրցունակ անդամներ: Դեռահասների համար նախատեսված Թումո կենտրոնը Կապանում ուսուցումը կիրականացնի դպրոցական ժամերից հետո, ինչը հնարավորություն կտա, որ ռեսուրսներով հարուստ միջավայրը օգտագործվի նաև 18 տարեկանից բարձր անձանց համար: Այս ծրագրերը կզարգացնեն շատ հմտություններ, ինչպիսիք են կոդավորումը, շուկայաբանությունը, վեբ դիզայնը, հիմնական ֆինանսները, ձեռներեցությունը, գյուղատնտեսությունը և տեխնոլոգիան: Ընդհանուր ծախսերը գնահատվում են 2 մլն եվրո, որից 1 մլն եվրոն ԵՄ-ի ֆինանսավորմամբ, մյուս 1 մլն եվրոն՝ ԹՈՒՄՈ-ի ֆինանսավորմամբ: |
| **Կապանի ՄՊՍԿ-ում և թիվ 4 ՆՈՒՀ-ում արևային կայանների տեղադրում** | Ծրագրով Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն ՀՈԱԿ-ի և Կապանի թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տանիքներին կտեղադրվի յուրաքանչյուրը 15 կվտ հզորության արևային կայաններ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանում Լիտվայի դեսպանատան հետ համագործակցությամբ՝ UAB SOLET TECHNICS-ի և ՕՀՄ էներջի ՍՊԸ-ի կողմից: Ծրագրի ընդհանուր արժեքը 48000 եվրո է, որի 10%-ը համայնքի համաներդրումն է: Ծրագրի իրականացման արդյունքում նշված ենթակառույցները կունենան տնտեսում և տնտեսված գումարը կծախսի առաջնահերթ խնդիրների լուծման համար: |
| **Արևային կայանների տեղադրում** | Ծրագրի նպատակն է արևային կայանների տեղադրման միջոցով նվազեցնել համայնքային ենթակայության կառույցներում սպառման ծախսը, այսպիսով տնտեսելով համայնքի բյուջեի միջոցները: Կայանները նախատեսվում է տեղադրել Կապանի թիվ 1, 13, 6, 7, 8, 9 ՆՈՒՀ-երի, Կապանի |

| | |
|---|---|
| | մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի, Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի և Կապանի իթվ 3 երաժշտական դպրոցի շենքերի տանիքներին՝ ընդհանուր 90 կվտ հզորությամբ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ համատեղ՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը 33 836 400 ՀՀ դրամ է, որի 5%-ը՝ 1 691 820 ՀՀ դրամը համայնքի համաֆինանսավորման չափն է: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա 4 051 400 ՀՀ դրամի խնայողություն: |
| **Կապան համայնքի 17 գյուղերում աղբահանություն կազմակերպելու նպատակով աղբամանների ձեռքբերում և տեղադրում** | Ծրագրի իրականացմամբ լուծում կստանա գյուղերի բնակիչների համար կարևոր խնդիրներից մեկը: Այն դրական ազդեցություն կունենա 17 գյուղերի 2712 բնակիչների համար:<br>Ծրագրի իրականացումն անմիջականորեն կնպաստի զբոսաշրջության զարգացմանը: Ծրագրի իրականացմամբ կբարելավվի 17 գյուղերի արտաքին տեսքը:<br>Ծրագրի իրականացմամբ կլուծվի բնապահպանական մեծ խնդիր՝ ձորակները կմաքրվեն տարիներով կուտակված աղբից, ինչը մեծ վնաս է հասցնում բնությանը:<br>Նախատեսվում է ձեռքբերել 90 հատ աղբաման, 1 աղբամանի գինը 110 000 ՀՀ դրամ, 90 x 110000 = 9 900 000:<br>Ծրագիրն իրականացվում է Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության միջոցներով ստեղծված՝ ՀՀ համայնքներում համավարակի հետևանքները տնտեսական զարգացման նախաձեռնությունների միջոցով մեղմելուն ուղղված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի արժեքի 20%-ը համայնքի համաֆինանսավորման չափն է: |

## *2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ*

Կապան խոշորացված համայնքի 2022 թվականի բյուջեն կազմվել է, հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, կազմակերպություններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները:

Համայնքի բյուջեն կազմվել է եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածության սկզբունքի վրա:

Կապան համայնքի 2022 թվականի բյուջեում եկամուտների ընդհանուր գումարը կազմում է, 3103724.6 հազար դրամ: Եկամուտների ընդհանուր ծավալի 1122279.2 հազար դրամը կազմում են սեփական եկամուտները:

Ըստ առանձին հարկատեսակների պատկերը հետևյալն է.

1. Հարկեր և տուրքեր՝ 2022 թվականի բյուջեով նախատեսվել է 303568.0 հազար դրամ:

2. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով ծրագրվել են 1945448,4 հազար դրամ պաշտոնական դրամաշնորհներ:

3. Համայնքի 2022 թվականի բյուջեի 854707.8 հազար դրամը բաժին է ընկնում այլ եկամուտներին:

Աղյուսակ 13

| **Եկամուտների տեսակ** | **2021 փաստացի** | | **2022 հաստատված** | | **2023 կանխատեսում** | |
|---|---|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **% ընդ-ից** | **հազ. դրամ** | **% ընդ-ից** | **հազ. դրամ** | **% ընդ-ից** |
| Ընդամենը, որից | 4182402,9 | 100 | 3103724.6 | 100 | 3277371.5 | 100 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 344726,0 | 8.2 | 303568.0 | 9.8 | 311764.7 | 9.5 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 2846371,3 | 68.0 | 1945448.4 | 62.7 | 1968793.8 | 60.1 |
| Այլ եկամուտներ | 991306,0 | 24.0 | 854707.8 | 27.5 | 996813.0 | 30.4 |

Կապան խոշորացված համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը նախատեսվել է 3103724.6 հազար դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի 3095576.7 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին /վարչական բյուջե/, իսկ 8147.9 հազար դրամը կապիտալ ծախսերին /ֆոնդային բյուջե/:

# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 2856018.4 | 3103724.6 | 32773171.5 | 3370267.5 | 3433267.9 | 3512186.7 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 7100 | 300653.0 | 303568.0 | 311764.7 | 322053.0 | 330748.4 | 345632.1 |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | 36700.0 | 43491.5 | 44665.8 | 46139.7 | 47385.5 | 49517.9 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 213500.0 | 205391.9 | 210937.5 | 217898.4 | 223781.7 | 233851.9 |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր | 7145 | 39453.0 | 42935.0 | 44094.2 | 45549.4 | 46779.2 | 48884.3 |
| 1150 | 1.4 Պետական տուրքեր | 7146 | 11000.0 | 11750.0 | 12067.3 | 12465.5 | 12802.0 | 13378.1 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 1966894.6 | 1945448.4 | 1968793.8 | 1998325.7 | 2022305.6 | 2044551.0 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7400 | 588470.8 | 854707.8 | 996813.0 | 1049888.8 | 1080213.9 | 1122003.7 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 7415 | 305300.0 | 612460.0 | 628996.4 | 649753.3 | 667296.6 | 697325.0 |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 7421 | 7473.3 | 5997.0 | 5997.0 | 5997.0 | 5997.0 | 5997.0 |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ | 7422 | 192469.5 | 197750.8 | 203090.1 | 205121.0 | 207659.2 | 209003.9 |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից | 7431 | 5000.0 | 6500.0 | 6675.5 | 6895.8 | 7082.0 | 7400.7 |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7441 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 |
| 1380 | 3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7442 | 47728.0 | | 120000.0 | 150000.0 | 160000.0 | 170000.0 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ | 7451 | 500.0 | 2000.0 | 2054.0 | 2121.8 | 2179.1 | 2277.1 |

## *2.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Համայնքի կայուն զարգացման համար հիմնական խոչընդոտներ են մայրաքաղաքից հեռու գտնվելը, համայնքի կախվածությունը որոշակի արդյունաբերական արտադրանքից (հանքարդյունաբերություն), հիմնական շուկաներին դժվար հասանելի լինելը և վերջին իրադարձություններով պայմանավորված՝ անվտանգությունը:

- **Համայնքային գույքի կառավարում.**

Թե՛ քաղաքի, և թե՛ գյուղերի զարգացման խոչընդոտներից ոչ պատշաճ վիճակի և որակի, անբարեկարգ շինություններն ու ենթակառուցվածքներն են՝ մի շարք մանկապարտեզներ, վարչական նստավայրեր, գրադարաններ, ակումբներ և մշակույթի տներ՝ հատկապես գյուղերում և քաղաքի հեռավոր թաղամասերում, ճանապարհներ, բակեր, մայթեր, խաղահրապարակներ, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ, վերելակներ, մուտքեր, խմելու և ոռոգման ջրագծեր, բնակավայրերի մեծ մասում գազաֆիկացման բացակայություն /գազաֆիկացված են Կապան քաղաքը և Աճանան, Սյունիք, Սզնակ գյուղերը/ և այլն:

- **Սոցիալական պաշտպանություն (տեղական սոցիալական ծրագիր).**

Համայնքապետարանում մեծ թիվ են կազմում տարբեր տեսակի սոցիալական աջակցություն ստանալու և աշխատանքի տեղավորմանն աջակցելու դիմումները: Համայնքում գործազրկության ցուցանիշը պայմանավորված է հիմնականում աշխատաշուկայում առաջարկվող մասնագիտությունների քնեռացմամբ (հիմնականում հանքարդյունաբերություն), բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու դժվարություններով՝ կապված մայրաքաղաքից հեռու գտնվելու և համայնքում գործող ԲՈՒՀ-երի սահմանափակ թվով մասնագիտությունների առկայությամբ, առաջարկվող աշխատանքի դիմաց ցածր վարձատրությամբ և այլ սոցիալական գործոններով:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքապետարաններին վերապահված լիազորությունները պատշաճ կերպով իրականացնելու, համայնքի սոցիալապես խոցելի ընտանիքներին հայտնաբերելու և թիրախավորված աջակցություն տրամադրելու, ինչպես նաև տրամադրվող աջակցության արդյունավետությունը վերահսկելու համար անհրաժեշտություն է առաջանում հաճախակի իրականացնել տնային այցելություններ, ինչը, հատկապես բազմաբնակավայր խոշորացված համայնքի պայմաններում, ենթադրում է լրացուցիչ բավականին մեծ ֆինանսական ծախսեր:

Սոցիալական խնդիրներին պատշաճ արձագանքելու համար կարևոր է նաև համայնքային մակարդակում ունենալ երեխաների պաշտպանության ցանց, մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների և երեխաների համար ամառային ճամբարի կազմակերպման հնարավորություն, ինչպես նաև ապահովել Կապանի մանկական կենտրոնի ծառայությունների ընդլայնումն ու մասնագետների կարողությունների զարգացումը:

- **Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն, մշակույթ, երիտասարդություն, սպորտ և առողջ ապրելակերպ.**

Ինչպես արդեն նշվել է ուսումնական հաստատությունների շենքային պայմանները բարելավման, նորոգման, բարեկարգման կարիք ունեն: Մյուս դժվարությունն այն է, որ ՆՈՒՀ-երից երկուսը գտնվում են բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում, այսինքն տիպային շենքեր չեն, ինչը իր հետ բերում է մի շարք անհարմարություններ: Բացի դրանից Կապան համայնքում ոչ բոլոր երեխաներն ունեն հնարավորություն ՆՈՒՀ հաճախելու՝

գոյություն ունեցող ՆՈՒՀ-երում տեղերի սահմանափակ լինելու պատճառով, ինչպես նաև ոչ բոլոր բնակավայրերում ունենք ՆՈՒՀ-եր կամ ՆՈՒՀ-երի այլընտրանքային խմբեր: Գյուղերում և քաղաքի հեռավոր թաղամասերում բացակայում են արտադպրոցական կրթության հնարավորությունները, խնդրին հնարավոր է լուծում տալ ակումբ-գրադարանների տեխնիկական վերազինման միջոցով: Կարևոր է նաև ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացնել վերապատրաստումներ, մասնագիտական փորձի փոխանակումներ՝ մանկավարժական կազմի մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով:

Մշակութային հիմնարկների մի մասն ունեն նորոգման և գույքով վերազինման կարիք, անհրաժեշտ է նաև ստեղծել նոր երաժշտական խմբեր, գրավիչ միջավայր, կազմակերպել նոր փառատոններ և միջոցառումներ:

Համայնքային ենթակայության մարզադպրոցներն ունեն արդիականացման, վերազինման, միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր շենքի կառուցման անհրաժեշտություն: Քաղաքում և գյուղերում անհրաժեշտ է նաև կառուցել բազմաֆունկցիոնալ խաղահրապարակներ, տեղադրել մարզասարքեր և այլն:

Համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդն արդեն տևական ժամանակ է, ակտիվ գործունեություն է տարածում համայնքում: Այս ոլորտում անհրաժեշտ է, շարունակել երիտասարդական փառատոնների, հավաքների և միջոցառումների կազմակերպումը, խթանել երիտասարդական ընտանիքների մասնակցությունը տարատեսակ միջոցառումներին, հիմնել երիտասարդական ակումբներ և այլն:

- **Համայնքի բնակավայրերի բարեկարգում, կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում, համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում.**

Համայնքային ենթակառուցվածքների, համայնքում առկա բնակֆոնդի հետ կապված հիմնական խնդիրը դրանց անմխիթար վիճակն է, որոնք նորոգման և բարեկարգման կարիք ունեն:

Անզեն աչքով տեսանելի է վերջին տարիներին Կապանի կոմունալ ծառայության բարեխիղճ և պարտաճանաչ աշխատանքը: Հարկ ենք համարում նշել, որ բավականին համալրվել է ծառայության տեխնիկական պարկը: Աշխատանքը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կառուցել գրասենյակ /շենք/՝ ծառայությունը չունի մշտական նստատեղ, ավտոպարկը համալրել բազմաֆունկցիոնալ մեքենաներով, ներդնել աղբահանության վարձավճարների գանձման էլեկտրոնային համակարգ, ինչպես նաև ապահովել բոլոր գյուղերի աղբահանությունը:

Համայնքում, նաև տարածաշրջանում, մեծ խնդիր է թափառող կենդանիների վնասազերծման հարցը:

Գերեզմանատների պահպանման հետ կապված անհրաժեշտ է իրականացնել ցանկապատման աշխատանքներ, քանի որ ցանկապատի բացակայությամբ պայմանավորված հնարավոր չի լինում բացառել կենդանիների մուտքը գերեզմանատներ:

Կապան համայնքում բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է նախապես հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների կողմից:

Բնագավառի խնդիրներից է գյուղական բնակավայրերի տրանսպորտի ապահովումը. ներկա պահին գյուղական բնակավայրերի մի մասում տրանսպորտ չի գործում, կամ ըստ բնակիչների՝ բավարար քանակությամբ չվերթներ չեն ապահովվում:

Համայնքի բնակիչների անվտանգ և կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ է համալրել ավտոբուսային հավաքակազմը, մշտական հսկողություն իրականացնել կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և սպասարկման որակի նկատմամբ, բարելավել ճանապարհային ենթակառուցվածքների վիճակը՝ իրականացնել ասֆալտապատման, ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման և ճանապարհների գծանշման աշխատանքներ:

Համայնքում փողոցային լուսավորության համակարգը ամբողջությամբ արդիականացված է և գործում են LED լուսատուներ:

- **Համայնքում բնակարանային շինարարություն**

Քաղաքում կա 253 բազմաբնակարան բնակելի շենք, որից երկուսը՝ կիսակառույց, և 37 բազմաբնակարան շենք /քոթեջներ/՝ գյուղական բնակավայրերում: Համայնքում կա 11 վթարային շենք, որից մեկը՝ Շինարարների 20 շենքը, ունի վթարայնության 3ա աստիճան:

Երկար տարիների դադարից հետո համայնքում ընթացքի մեջ է նոր բազմաբնակարան շենքի կառուցումը:

Բազմաբնակարան շենքերի կառուցման հետ կապված խնդիրներից կարելի է առանձնացնել քաղաքում անհրաժեշտ տարածքների բացակայությունը:

- **Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում, պետության պաշտպանության աջակցությունը.**

Համայնքում վտանգների նկատմամբ խոցելիությունը բարձր է, քանի որ շենքերը նախագծելիս բավարար ուշադրություն չէր դարձվել այնպիսի ռիսկերի հետևանքներին, ինչպիսիք են երկրաշարժերը, սողանքները, ջրհեղեղները և այլն: Հաշվի առնելով այդ ամենը՝ համայնքապետարանը՝ համայնքում գործող ուժային և այլ կառույցների հետ համատեղ միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների համար կյանքի ապահով պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մի շարք նորարարական մոտեցումներ մշակելու ողղությամբ՝ այդ մարտահրավերների լուծման նպատակով: Վերջին իրադարձություններով պայմանավորված, անհրաժեշտ է, անհապաղ միջոցներ ձեռնարկել բնակիչների պաստպարումն ապահովելու համար, ինչը հնարավոր է կազմակերպել ապաստարանների կառուցման, նկուղային և կիսանկուղային հարկերի նորոգման, գյուղերում և հեռավոր թաղամասերում պարզագույն թաքստոցների կառուցման միջոցով, ինչը ներկա պահին բացակայում է:

- **Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում.**

Կապանում զբոսաշրջության զարգացման խթանումը կարող է մեծ ազդեցություն ունենալ համայնքի կայուն զարգացման վրա: Համայնքում զբոսաշրջության զարգացման համար խոչընդոտ է համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը, առկա ենթակառուցվածքների՝ ընդունված պահանջներին անհամապատասխանությունը, անհրաժեշտ ծառայությունների բացակայությունը կամ ոչ բավարար վիճակը: Զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ համայնքի ճանաչելիությունը, գրավչությունը և հետաքրքրությունը հանրապետությունում և դրանից դուրս բարձրացման, համայնքում տուրիզմի հնարավոր տեսակների վերաբերյալ

տեղեկատվության մատչելիության ապահովման և տարածման, տեղեկատվական կենտրոնի ստեղծման և համապատասխան մասնագետների պատրաստման ուղղությամբ:

- **Համայնքում արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացում.**

Կապան համայնքում բնակիչների բժշկական սպասարկումն իրականացվում է առկա առողջապահական հիմնարկների կողմից: 2015 թվականին կապիտալ վերանորոգվել և վերազինվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ: Բնակիչների բժշկական սպասարկման արդյունավետության և մատչելիության ապահովման նպատակով կենտրոնին անհրաժեշտ է ժամանակակից ախտորոշիչ և բուժական սարքավորումներ: Կենտրոնի համար արդիական է նաև կադրային խնդիրը: «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկան ունի կապիտալ վերանորոգման և վերազինման կարիք: Անմխիթար վիճակում են գտնվում նաև մի շարք գյուղերի բուժակ մանկաբարձական կետերը:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար իրականացվում են բնակիչներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակի բարձրացմանն և մատչելիության ապահովմանն ուղղված ծրագրեր. այլ բժշկական կենտրոնների բժիշկները պարբերաբար իրականացնում են ինչպես հիվանդների ընդունելություններ, զննումներ, այնպես էլ վիրահատություններ:

- **Գյուղական բնակավայրերում գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում**

Կապան խոշորացված համայնքում ընդգրկված է 38 գյուղական բնակավայր: Գյուղատնտեսության բնագավառի զարգացման խոչընդոտներից է գյուղական բնակավայրերում ոռոգման ցանցի բացակայությունը, կամ էլ առկայության դեպքում՝ դրանց ֆիզիկական մաշվածությունը: Գյուղական բնակավայրերի խնդիրներից է նաև գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը: Ներկա պահին գյուղերում բնակիչները զբաղվում են անասնապահությամբ և այգեգործությամբ: Գյուղերը չունեն գյուղատնտեսական արտադրանքի սպառման հիմնական շուկա: Արդյունքում ստացված գյուղատնտեսական արտադրանքը իրացվում է վերավաճառողների, ներքին սպառման կամ համայնքում կատարվող ապրանքափոխանակման միջոցով:

Ոլորտը զարգացնելու նպատակով հնգամյա զարգացման ծրագրով նախատեսվում է վերանորոգել ոռոգման ցանցերը կամ նոր ոռոգման համակարգ տեղադրել, նորոգել դաշտամիջյան ճանապարհները և այլն:

Գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով նախատեսվում է աջակցություն ցուցաբերել ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացման համար:

- **Համայնքում բարեգործության խթանում**

Համայնքում բարեգործության խթանումը կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական և կայուն զարգացման իրավիճակի բարելավմանը: Կապան համայնքը ունի բարեգործներին համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման մեջ ներգրավելու փորձ: Համայնքապետարանը համայնքում բարեգործության խթանման նպատակով նախատեսում է զարգացնել ավելի ակտիվ և արդյունավետ համագործակցություն ինչպես կապանարնակ, այնպես էլ ծագումով կապանցի և այլ բարերարների հետ, իրականացնել տարբեր ակցիաներ, պատրաստել տեղեկատվական նյութեր և այլն:

Համայնքի պարտադիր խնդիրների լուծման հարցում կարևոր ենք համարում նաև համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, անհատների և այլ կազմակերպությունների հետ, որոնք տարբեր ոլորտներում իրականացնում են համայնքի

պարտադիր խնդիրներին առնչվող ծրագրեր՝ գործարար միջավայրի զարգացման և ձեռներեցության խթանման, զբոսաշրջության զարգացման, գյուղատնտեսության զարգացման, շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական կրթական ծրագրերի իրականացման, աղետների ռիսկի նվազեցման և այլ նպատակներով և համայնքը կարող է համաֆինանսավորման կամ աջակցության այլ միջոցներով նպաստել տվյալ ծրագրերի իրականացմանը:

## *2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

| *S- Ուժեղ կողմեր* | *W- Թույլ կողմեր* |
|---|---|
| • Որոշ պետական կառույցների մարզային ստորաբաժանումների տեղակայումը համայնքում,<br>• Համայնքում բնականոն գործող ձեռնարկություններ /խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություններ, արտադրական,<br>• Կրթական, առողջապահական հիմնարկների առկայություն,<br>• Օդանավակայնի առկայություն,<br>• Հարուստ պատմամշակութային ժառանգություն,<br>• Բնական հուշարձանների առկայություն,<br>• Բանիմաց աշխատուժ, մարդկային ինտելեկտուալ ռեսուրս,<br>• Մաքուր և լուսավոր համայնք: | • Մայրաքաղաքից հեռու գտնվելը, ճանապարհների անհարմարություն,<br>• Սահմանին կից գտնվելը,<br>• Թեկրի անվտանգություն,<br>• Համայնքի կախվածությունը որոշակի արդյունաբերական արտադրանքից (հանքարդյունաբերություն),<br>• Համայնքում գործազրկության կամ թերզբաղվածության մակարդակ,<br>• Համայնքում սոցիալական ծանր վիճակում գտնվող բնակչություն (աղքատության շեմից ցածր գտնվող բնակչություն),<br>• Ոչ բարվոք վիճակում գտնվող ենթակառուցվածքներ,<br>• Գյուղական բնակավայրերում սահմանափակ հասանելիություն, գերարագ ինտերնետի բացակայություն,<br>• Արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թիվ,<br>• Երիտասարդների մեծ արտահոսք դեպի մայրաքաղաք կամ արտերկիր,<br>• Համայնքում գործող բուհերում սահմանափակ թվով մասնագիտական ուղղվածություն, /հումանիտար, բնագիտական մասնագիտությունների գծով ԲՈՒՀ-երի բացակայություն /<br>• Համայնքում բնակարանային ֆոնդի շահագործման ոչ արդյունավետ կառավարում,<br>• Բնակարանային ֆոնդի ոչ բարվոք վիճակ և տեսք,<br>• Համայնքում տուրիզմի զարգացմանը նպաստող ժամանակակից ենթակառուցվածքների բացակայություն,<br>• Համայնքում վթարային շենքերի առկայություն: |

| O - Հնարավորություններ | T- Սպառնալիքներ |
|---|---|
| • Կապանը Սյունիքի մարզկենտրոնն է<br>• Համայնքի աշխարհագրական դիրք՝ Կապանը գտնվում է միջպետական Մ2 և Մ17 ճանապարհների վրա, Իրանի սահմանին մոտ գտնվելը,<br>• Մեղմ կլիմա, բերրի հողեր, ջրի աղբյուրներ,<br>• Համայնքի ակտիվ ընդգրկվածությունը պետական/ միջազգային ծրագրերում,<br>• Նպատակային ծրագրեր իրականացնելու պատրաստակամություն և համայնքի բյուջեում ֆինանսական միջոցների նախատեսում (համաֆինանսավորման սկզբունքով),<br>• Համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող վայրեր,<br>• Համայնքում արտադրվող հիմնական արտադրանքի բարի համբավ (հրուշակեղեն, մսամթերքի և կաթնամթերքի, հավի և այլն),<br>• Համայնքում տարբեր ոլորտներում ծառայություններ մատուցող կազմակերպությունների մեծ թիվ: | • **Անվտանգություն,**<br>• Համայնքում գյուղատնտեսական արտադրանքի սպառման և արտահանման համար սակավ հնարավորություններ,<br>• Համայնքին մոտ գտնվող վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների, ջրամբարի առկայություն,<br>• Հանքաարդյունաբերությամբ պայմանավորված օդի, ջրի, հողի բարձր աղտոտվածություն,<br>• Համայնքը գտնվում է սեյսմիկ պատկանելիության 2-րդ գոտում,<br>• Վերջին տարիներին անընդհատ նվազող բնակչություն,<br>• Հնարավոր պատերազմական իրավիճակի առկայություն՝ բնակավայրերի մեծ մասը խիստ սահմանամերձ են: |

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### *3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ*

Առաջիկա 5 տարիների ընթացքում, որդեգրված քաղաքականության և համայնքի հնգամյա ծրագրի իրականացման արդյունքում, համայնքապետարանն ակնկալում է ունենալ առավել անվտանգ, բարեկարգ, կանաչապատ, էկոլոգիապես մաքուր, նորոգված ենթակառուցվածքներով, տնտեսապես զարգացած, հոգևոր, մշակութային, մարզական ակտիվ կյանքով ապրող և ավելի բարեկեցիկ բնակիչներով Կապան:

Ակնկալվող և արդեն նախագծված ծրագրերի միջոցով, որոնք կիրականացվեն պետական և համայնքային բյուջեների միջոցների, տեղական դոնոր կազմակերպությունների, միջազգային կառույցների և բարերարների ներդրումներով, համայնքը կունենա էլ ավելի համակարգված աղբահանություն, նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված առավել շատ երեխաներ, համայնքային կյանքում երիտասարդների ակտիվ մասնակցություն և այլն:

Համայնքի զարգացման հիմնական գրավականը պետք է լինի տնտեսության դիվերսիֆիկացիան /բազմատեսակացում/, այսինքն՝ հանքարդյունաբերությունից զատ և նրանով չպայմանավորված ոլորտների զարգացումը, որոնցից առաջնահերթը մեր համայնքում կլինեն բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ և ինտելեկտուալ ներուժի օգտագործմամբ նոր աշխատատեղերի հիմնումը, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացումը և այլն:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը միտված է նվազեցնել աղքատության շեմից ցածր ընտանիքների թիվը, ներկա պահին համայնքում կա աղքատության շեմից ցածր

գտնվող 788 ընտանիք (նպաստառու), որը 2022 թվականի ավարտին նախատեսվում է հասցնել 770-ի:

Սեփական եկամուտների տեսակարար կշիռը՝

| 2022 | 2023 | 2024 | 2025 | 2025 |
|---|---|---|---|---|
| 36.2 % | 35,2% | 35,2% | 35,4% | 35,9% |

44-օրյա պատերազմից հետո համայնքի բնակչության թիվը նվազել է, մտահոգիչ է նաև համայնքում ծնունդների թվին գերազանցող մահերի թիվը, որը վերջին երկու տարվա ընթացքում ավելի է աճել: Հնգամյա ծրագրում նախատեսվում են մի շարք ծրագրեր բնակչության թվի աճ գրանցելու նպատակով:

## 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

✓ **Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.**

Ապահովել նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ավելացնելով խմբասենյակների թիվը, նորոգելով մանկապարտեզները և կառուցելով նոր մանկապարտեզներ, գյուղերում ներդնելով այլընտրանքային նախադպրոցական կրթության անվճար ծառայություններ և ստեղծելով հնարավորություններ՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Շարունակել նախադպրոցական կրթության որակի բարելավումը՝ վերապատրաստումներ, մասնագիտական փորձի փոխանակումներ կազմակերպելու միջոցով, սահմանելով դաստիարակի որակավորման տարակարգերի չափորոշիչներ, հնարավորություն ընձեռնելով երկարամյա փորձ ունեցող դաստիարակի օգնականներին մասնագիտական կրթություն ստանալու և աշխատանքային առաջընթացի համար:

Շարունակել արտադպրոցական կրթության որակի բարելավումը հաստատություններում՝ պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման, վերապատրաստումների, փորձի փոխանակման ծրագրերի, որակավորման տարակարգերի չափորոշիչներ սահմանելու և բարձր առաջադիմություն ունեցող լավագույն սաներին՝ բարձրագույն մասնագիտական նպատակային կրթություն ստանալու և աշխատանք ապահովելու միջոցով:

Ակումբ-գրադարանների տեխնիկական վերազինման և կենսաթոշակի անցած մասնագետների միջոցով հասանելի դարձնել արտադպրոցական կրթությունն այն թաղամասերի ու գյուղերի երեխաների համար, որտեղ չկան արտադպրոցական հաստատություններ:

✓ **Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.**

Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման նպատակով արդիականացնել և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնել Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի դահլիճը, կառուցել նոր շենք աթլետիկայի մարզադպրոցի համար, արդիականացնել և վերազինել մարմնամարզության մարզադպրոցը, սահմանել որակավորման տարակարգերի չափորոշիչներ մարզադպրոցի մանկավարժական անձնակազմի համար, ձեռք բերել ժամանակակից վազքուղի, ստեղծել բասկետբոլի պրոֆեսիոնալ ակումբ, տարբեր մարզաձևերից մրցաշարեր կազմակերպել,

քաղաքի բոլոր թաղամասերում և մի շարք գյուղերում կառուցել բազմաֆունկցիոնալ խաղահրապարակներ, խաղադաշտեր, տեղադրել մարզասարքեր և այլն:

✓ **Համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.**

Պահպանել, զարգացնել և ապահովել մշակութային ավանդույթների ընդգրկվածությունը՝ մշակույթի կենտրոնի նյութատեխնիկական բազայի արդիականացման, վերազինման և կահավորման, նոր երաժշտական խմբերի ստեղծման, նոր փառատոնների և միջոցառումների կազմակերպման, գյուղերում մշակութային օջախների բարեկարգման և վերազինման, կապանյան մշակույթը ներկայանալի դարձնելու միջոցով:

Թանգարանների և գրադարանների հետ կապն աշխուժացնելու և ավելի ամրապնդելու նպատակով համալրել գործող թանգարանների թանգարանային ֆոնդը, հիմնել նոր թանգարան, ստեղծել գրադարանային գրավիչ միջավայր և համալրել գրադարանների գրքային ֆոնդը, ստեղծել գրադարանների աշխատակիցների խրախուսման համակարգ՝ նրանց մասնագիտական պատրաստվածության և որակավորման հիման վրա:

✓ **Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.**

Համայնքում երիտասարդության ակտիվության բարձրացման և պահպանման նպատակով ապահովել երիտասարդության ռազմավարական ծրագրերի հետևողական իրականացումը, համայնքի կառավարման և որոշումների կայացման հարցում երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը, երիտասարդական փառատոնների կազմակերպումը և հավաքների կազմակերպման աջակցությունը՝ հանրապետության տարբեր մարզերի երիտասարդների մասնակցությամբ, երիտասարդական ակումբների /հայրենասիրական, մարզական, ինտելեկտուալ/ հիմնումը /հիմնման աջակցությունը/, մարզական և մշակութային միջոցառումներին երիտասարդ ընտանիքների մասնակցության խթանումը:

✓ **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը (տեղական սոցիալական ծրագիր).**

Ապահովել բնակիչների ավելի բարեկեցիկ կյանքը խոցելի ընտանիքների հասցեական և թիրախավորված աջակցության, համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով առավել խոցելի ընտանիքների կարիքներին արձագանքման, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման /գյուղական համայնքերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում/, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ հոգեբանական ծառայությունների ընդլայնման, հատուկ կարիքներով մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների ստեղծման /ստեղծման աջակցության/, սոցիալական ոլորտի գործընկերների հետ համատեղ սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման, համայնքային մակարդակում երեխաների պաշտպանության ցանցի հիմնման և կանոնավոր գործունեության ապահովման, Կապանի Մանկական Կենտրոնի ծառայությունների ընդլայնման և մասնագետների կարողությունների զարգացման, Կապանում երեխաների ամառային ճամբարի հիմնման, Արցախից տեղահանված ընտանիքների լիարժեք ինտեգրման,

տնտեսական կայունության և սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրման միջոցով:

✓ **Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանումը.**

